

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Արտաքին Քաղաքականության Յաջող Քայլերը

Անցեալ շաբաթ, Միացեալ Նահանգներն ու Հայաստանը վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը՝ ամրապնդելու երկկողմ յարաբերութիւնները բոլոր ուղղութիւններով: Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեանի Ուաշինկթըն կատարած վերջին այցելութիւնը եւ ունեցած բարձր մակարդակի հանդիպումները՝ գործադիր եւ օրէնսդիր իշխանութեան ներկայացուցիչներուն հետ, ու այն ջերմ ընդունելութիւնը, որուն արժանացաւ Հայ դիւանագետը յատկապէս Պետական Բարտուղար Թոմի Պլինքընի կողմէ, եկաւ հաստատելու որ, Կովկասը ու յատկապէս Հայաստանը կը գտնուի Ամերիկայի արտաքին քաղաքականութեան հետաքրքրութիւններուն ու շահութեան ներքեւ:

Վերջին ամիսներուն Պլինքընը հեռաձայնային խօսակցութիւններ կ'ունենար Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու հետ, որոնք անախարհաբար էին եւ իրենց յաճախականութեամբ եւ անոնց բովանդակութեամբ: Այս գրոյցներու ընթացքին քննարկուած հարցերը պարզաբանելով, Ապրիլի վերջերս Պետական Բարտուղարը Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովներու լսումներուն ընթացքին ըսած էր, որ ԱՄՆ-ի վարչակազմը բանակցութիւններ կը վարէ Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ կանխելու պատերազմական գործողութիւնները: «Ես բազմիցս խօսած եմ Հայաստանի վարչապետ Փաշինեանի եւ Ատրպէյճանի Նախագահ Ալիեւի հետ, որպէսզի առաջին հերթին վստահ ըլլամ, որ ոչ ոք կը ձեռնարկէ որեւէ քայլ, որ կրնայ յանգեցնել հակամարտութեան վերսկսման», Գոնկրէտի առջեւ ըսած էր Պլինքընը: «Մենք դեմ ենք որեւէ միակողմանի գործողութիւններու, յատկապէս Ատրպէյճանի կողմ, որոնք կը սրեն իրավիճակը», ընդգծած էր Ամերիկեան դիւանագիտութեան ղեկավարը: Կողմերէն մէկուն նման հասցեագրուած խօսք ուղղելը ու նաեւ զայն հանրայնացնելը, բաւականին յաջողութեամբ քայլ է միջազգային յարաբերութիւններու պարզապէս: Պաքոյի մօտ վստահաբար վրդովում յառաջացուցած է Պլինքընը այս խօսքերը, սակայն պատգամը վստահաբար տեղ հասած է ու Ալիեւ կամայ թէ ակամայ ստիպուած է հաշուի նստելու այդ

Շար.ը էջ 6

Տարածաշրջանային խաղաղութիւնն է Անվտանգութեան Միակ Յուսակի Երաշխիքը. Վարչապետ Փաշինեան

Մայիս 9-ի Յաղթանակի եւ խաղաղութեան տօնին առթիւ, վարչապետ Նիկոլ Փաշինեանը ուղերձով անդրադարձած է Շուշիի ազատագրման եւ դառնութեամբ արձանագրած է, որ արցախեան առաջին պատերազմին տարած յաղթանակը ոչ միայն չփոխակերպուեցաւ դիւանագիտական, քաղաքական, տնտեսական յաղթանակի, այլեւ այդ յաղթանակի բազմաթիւ պտուղներ այսօր՝ 44-օրեայ պատերազմէն յետոյ, կորսուած են, իսկ Արցախն ու Հայաստանը կանգնած են լրջագոյն մարտահրաւէրներու առջեւ: Տարածաշրջանային խաղաղ գոյակցութիւնն է անվտանգութեան միակ յուսակի երաշխիքը, շարունակած է Նիկոլ Փաշինեանը:

«Այս իրավիճակին, սակայն, մեր արձագանգն ամենեւին էլ վախճանաբանութիւնը չպիտի լինի, այլ՝ սթափ, սառը, գրագէտ վերլուծութիւնն այն պատճառներով, որ յանգեցրել են ռազմաքաղաքական ու տարածաշրջանային այսօրուայ վիճակին եւ ապագայի գործնական ծրագրաւորումը: Յանուն Հայրենիքի իրենց



Հայաստանի ղեկավարութիւնը «Եռաբլուր» զինուորական պանթոնին մօտ յարգանքի տուրք կը մատուցէ

կեանքը տուած մեր նահատակների արիւնը չպէտք է մսխուի, եւ անոնց գործի մեծագոյն արտայայտումը պիտի դառնայ Հայոց ուժեղացող պետականութիւնը, Արցախի հայութեան իրաւունքների լիարժէք իրացումը, մեր սերունդների խա-

ղաղ զարգացումն ու տարածաշրջանային խաղաղ գոյակցութիւնը, որն Արցախի ու Հայաստանի անվտանգութեան միակ յուսակի երաշխիքն է», նշած է վարչապետը:

Շար.ը էջ 5

ԱՄՆ Արդարադատութեան Բաժանմունքը Սկսած է Խաչատրեաններու 63 Միլիոն Տոլար Արժող Դղեակը Գրաւելու Գործընթաց



Գագիկ Խաչատրեանի ընտանիքին պատկանող Լոս Անճելէսի դղեկը

ԱՄՆ Դաշնակցային կառավարութիւնը դատարան հայց ներկայացուցած է՝ Լոս Անճելէսի հեղինակաւոր Հոլմպի Հիլզ թաղամասին մէջ գտնուող եւ Հայաստանի Պետական Եկամտներու Կոմիտէի նախկին նախագահ Գագիկ Խաչատրեանին պատկանող մեկառուան ձնատունը բռնագրաւելու համար, որ, պնդման համաձայն, գնուած է փտածութեան գումարներով:

Ըստ ԱՄՆ Արդարադատութեան Բաժանմունքի հաղորդագրութեան՝ առանձնատունը ձեռք

բերուած է Հայաստանի մէջ «փտածութեանն ձեւաւորուած եկամտուներով»:

Արդարադատութեան Բաժանմունքը դատարան ներկայացուցած է հայց՝ յայտնելով, որ գործարար Սեդրակ Առուստամեանը, որ Գագիկ Ծառուկեանի «Մուլթի Կրուպ»-ի տնօրէնն է, Գագիկ Խաչատրեանին եւ անոր ընտանիքին աւելի քան 20 միլիոն տոլար կաշառք տուած է՝ իր առեւտրային ընկերութեան նկատմամբ բարենպաստ

Շար.ը էջ 5

Ուաշինկթըն Կոչ Կ'ընէ Ընդդիմութեան՝ Ձերձ Մնալ Բռնութիւններէն

«Մենք լիովին կ'աջակցինք զգաւոր կամ քի արտայայտման եւ խաղաղ հաւաքներու հիմնարար իրաւունքը: Կոչ կ'ընենք մարդոց իրենց կարծիքը արտայայտելու խաղաղ ձեւով: Իշխանութիւններուն կը յորդորենք զսպուածութիւն դրսեւորել, իսկ ցուցարարներուն՝ գերծ մնալ բռնութեան եւ յարգել օրէնքի գերակայութիւնն ու Հայաստանի ժողովրդավարութիւնը», յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայսը:

Ամերիկեան դիւանագիտական գերատեսչութեան ներկայացուցիչը Հայաստանի մէջ շարունակուող ընդդիմադիրներու բողոքի շարժումներուն անդրադարձած է լրագրողներէն մէկուն հարցին ի պատասխան:

Նետ Փրայսը չի շեղուցած է անցեալ շաբաթ Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչներուն հետ տեղի ունեցած ռազմավարական երկխօսութեան մասին՝ չաւելելով, որ այդ քննարկումներուն մէջ կողմերը վերահաստատած են փոխադարձ հաւատարմութիւնը Հայաստանի ժողովրդավարական զարգացման եւ Միացեալ Նահանգներու աջակցութիւնը:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ընդդիմութիւնը Կը ԳՈՎ Արիւնոտ «ՊԼԱՆ Բ»-ԻՆ, ԹԷ...

ՄՈՎՍԵՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Երեւանի կենտրոնում տեւական ժամանակ է՝ շարունակուում են ընդդիմադիր գործիչների ու նրանց աջակիցների բողոքի գործողութիւնները, որոնք այդպէս էլ չեն վերածուում համապետական ակցիաների՝ չստանալով հանրութեան լայն շրջանակների աջակցութիւնը: Ընդդիմութիւնը հաշուարկել էր, որ, կրկնելով 2018 թուականի յեղափոխութեան գործիքակազմը, շատ կարճ ժամանակում կը յաջողի, այնինչ լրիւ հակառակ գործընթացն է տեղի ունենում:

Թէ ինչո՞ւ է յաջողում ու էի յաջողելու ընդդիմութիւնը, պատճառները շատ են, որոնք յայտնի են ինչպէս բուն կազմակերպիչներին, այնպէս էլ ՀՀ քաղաքացիներին: Հենց այդ անյաջողութիւններն էլ դրոշմ են ընդդիմութեանը կամաց-կամաց անցում կատարել «պլան Բ-ին» կամ էլ դեռեւս դրա նախընթացին, որի մասին վերջիններս մի քանի անգամ յայտարարել են՝ չչստակեցնելով, թէ ինչի նկատի ունեն:

Չնայած «պլան Բ»-ի առեղծուածային լինելուն՝ արդէն գնալով ակնյայտ է դառնում, թէ ինչ նկատի ունի ընդդիմութիւնը դասակարգելով: Հասկանալով, որ խաղաղ գործողութիւններով ոչնչի չեն հասնելու՝ արդէն մի քանի օր է՝ ընդդիմադիր ակտիւստները սկսել են գնալ բռնութեան ճանապարհով: Ասուածի վկայութիւնն են ինչպէս փողոցում իրենց չմիացող վարորդների ու մեքենաների հետ բախումներն ու քաշքշուքները, օրէ-ցօր շարժման շարքերում երեւացող օլիգարխների թիկնապահներն ու նրանց սպասարկող «թաղային հեղինակութիւնները», այնպէս էլ իշխանութեան հանդէպ լոյսալ դիրքորոշում ունեցող անձանց (օրինակ՝ Սոս Զանիբեկեան) վրայ յարձակումներն ու սոցցան-

ցային հարթակներում վերջիններս ու նրանց ընտանիքների դէմ հնչող սպառնալիքները:

Բացի այդ, վերջերս յաճախ նկատելի են նաեւ ընդդիմադիրների աջակիցների գրառումներն այն մասին, որ «այս իշխանութիւնն անարիւն է չի հեռանալու»: Վերոնշեալին կարելի է գումարել նաեւ ԱԱԾ-ի յայտարարութիւնը, ըստ որի՝ ցուցարարները նախատեսում էին գրոհել ԱԺ-ի շէնքը կառավարութեան անդամների՝ այնտեղ գտնուելու ժամանակ, եւ նաեւ օրեր առաջ Սիսիանի անցակէտում ձերբակալուած քաղաքացին, որը փորձել էր Հայաստան տեղափոխել գէնթ-գինթմթերք:

Ըստ էութեան՝ վերոնշեալը կարող է լինել գոյտ նախընթացն ու ապագայ գործողութիւնների վերաբերեալ յստակ սպառնալիքի ուղերձ, որ եթէ իշխանութիւնը չհեռանալ խաղաղ ցոյցերի ճանապարհով, ապա իրենք անցում են կատարելու «պլան Բ»-ին՝ երկիրը տանելով ներքաղաքական բախումների ու անկայունացման ճանապարհով: Տարօրինակ է, որ նման ճանապարհի մասին է խօսուում մի երկրում, որտեղ թարմ են «Հոկտեմբերի 27»-ի արեան հետքերը, երբ մի քանի րոպէսում գլխատուեց երկիրը՝ խոր ու անդառնալի հետք թողնելով Հայաստանի յետագայ զարգացման վրայ:

Ընդդիմութեան տապալումն արդէն փաստ է, որի վերջակէտը դրուեց Ազգային ժողովում: Մնում է միայն հասկանալ, թէ ընդդիմադիր լիդերների մօտ ե՞րբ կը գայ իրական պետականամետութեան գիտակցումը, եւ նրանք կը հրաժարուեն իրենց՝ ՀՀ-ի ապագան՝ որպէս պետութեան, կասկածի տակ դնող «պլան Բ»-ից՝ հնարաւորութիւն տալով երկրին զարգանալ՝ մնալով բնականոն ռեյսերի վրայ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Փողոցի Ընդդիմութիւնը Մի Բան Անել Կարողացել Է. Ահա, Թէ ԻՆՉՆ Է Դա

ՅԱՎՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Յունիսի 20-ի արտահերթ ընտրութիւնից յետոյ խորհրդարանում յայտնուած, իսկ բոլորովին վերջերս խորհրդարանից փողոց դուրս եկած եւ անհնազանդութեան շարժում սկսած ընդդիմադիր ուժերը, որոնք մեծ հաշուով ներկայացնում են Հայաստանը քառօրդ դար կառավարած համակարգի մի քանի թէեւ, գործնականում կամայ, թէ ակամայ ի ցոյց են դնում Հայաստանում առկայ քաղաքական ճգնաժամը: Պէտք է նկատել, որ այդ մի խնդիրը ընդդիմութիւնը «լուծել» կարողացել է: Պարզապէս, այդ ճգնաժամը

Այսօր Հայաստանում խորացել եւ խորանում է լեզիտիմ ընդդիմութեան բացակայութեան ճգնաժամը

ամենեւին այն չէ, ինչ նկատի է առնում սովորաբար՝ դրա մասին խօսակցութիւններում: Իսկ սովորաբար նկատի է առնում այն, որ քաղաքական ճգնաժամը դա իշխանութեան հանդէպ հանրային անվստահութիւնն է, որ բերում է լեզիտիմութեան խնդրի եւ առաջացնում քաղաքական ուժերի չարաբերակցութեան հարցեր: Այդ ընկալումը բնականաբար գալիս է հենց նախորդ համակարգի կառավարման շրջանից, քանի որ այդ շրջանում քաղաքական ճգնաժամի հիմքը կամ խորքային պատճառը հենց իշխանութեան լեզիտիմութեան բացակայութիւնն էր, ինչն էլ իր հերթին ինքնաբերաբար լեզիտիմ էր դարձնում գրեթէ ցանկացած ընդդիմութեան: Այսօր պատկերը տրամադծորեն հակառակ է եւ քաղաքական ճգնաժամն ունի այլ պատճառահետեւան քային «սլացք»:

Մասնաւորապէս, այսօր Հայաստանում խորացել եւ խորանում է ընդդիմութեան ճգնաժամը, ընդդիմութեան լեզիտիմութեան բացակայութեան, կամ լեզիտիմ ընդդիմութեան բացակայութեան ճգնաժամը: Նախկին կառավարող համակարգ-ընդդիմութեան փողոցային անհնազանդութեան ակցիաների հանդէպ հանրութեան վերաբերմունքը, որ արտայայտուում է ոչ միայն Երեւանում, այլ նաեւ Հայաստանի խոշոր քաղաքներում՝ Վանաձոր, Գիւմրի, առաւել քան ցցուն է դարձնում այդ խնդիրը: Ընդ որում, նախկին կառավարող համակարգ-ընդդիմութեան լեզիտիմութեան բացակայութիւնն ինքնաբերաբար լեզիտիմ է դարձնում ներկայիս կառավարող մեծամասնութեանը՝ որոշակիօրէն անգամ անկախ այդ կառավարման արդիւնաւետութիւնից: Առանցքային արդիւնք դիտուում է այն, որ թոյլ չտրուի նախկին համակարգի վերադարձ իշխանութեան:

Մինչդեռ, դա Հայաստանի համար նախազանց անհամարժէք

եւ փոքր խնդիր է՝ ներկայիս աշխարհաքաղաքական իրողութիւնների եւ դրանցից բխող մարտահրաւէրների համատեքստում: Եւ այստեղ է, որ առկայ է խորքային քաղաքական ճգնաժամը՝ Հայաստանում որակապէս եւ բովանդակային առումով իրապէս այլընտրանքային ընդդիմութեան բացակայութիւնը, որի առկայութիւնը ոչ թէ «կարգարացնի» գործող քաղաքական իշխանութեանը, այլ կը դնի առաւել բարձր եւ լրջմիտ պատասխանատուութեան տակ: Այդպիսի ընդդիմութեան բացակայութիւնն է ներկայումս Հայաստանում քաղաքական ճգնաժամի բուն պատճառը կամ արմատը, որի յաղթահարումը օբիեկտիւօրէն պահանջում է իհարկէ որոշակիօրէն տեւական ժամանակ, սակայն դրանով հանդերձ առաւել հրամայական է դարձնում յաղթահարման ուղիների փնտռողի կամ մշակման ուղղութեամբ արդէն այսօր շօշափելի աշխատանքի անհրաժեշտութիւնը: Մինչդեռ ճգնաժամի առանցքային յատկանիշներից կամ «բաղադրիչները» մէկն այն է, որ բացակայում է դրա ուղղութեամբ համակարգուած եւ համադրուած աշխատանքը այն ուժերի եւ խմբերի միջեւ, որոնք ունեն այն կատարելու ներուժ եւ ռեսուրս: Յաճախ այդ ներուժն ու ֆինանսատնտեսական ռեսուրսը տարբեր տեղերում են եւ համադրուածութեան խնդիրը վերաբերում է նաեւ այդ հանգամանքին:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Նոր Օր՝ Նոր Ֆիասկօ. Ընդդիմութեան Հուժկու «Համազգային Հանրահաւաքը» Նախորդից Շատ Աւելի Սակաւամարդ Էր

ՋՈՆԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Վերջին երկու օրերին Հայաստանի երկրորդ եւ երրորդ խորհրդարան քաղաքներ գնալուց, այնտեղ էլ հերթական մերժումներն արձանագրելուց յետոյ, ընդդիմութիւնը վերադարձաւ բնականոն ռիթմին՝ լոկ Երեւանում մերժումներին:

Մայիսի 9-ին, ընդդիմութիւնը հուժկու համազգային հանրահաւաք էր հրաւիրուել Ֆրանսայի հրապարակում եւ մի քանի օր գովազդում էր այն: Անգամ հանրահաւաքի քաղաքական ելույթներից աւելի երկար համերգային մշակութային ծրագիր էր կցել դրան, որ երեւի գոնէ անվճար համերգի համար մարդիկ հրապարակ գնային:

Ըստ ընդդիմադիր առաջնորդների՝ իշխանափոխութեան հարցը պիտի արդէն լուծուած լինէր, եւ ըստ Մամիշանեանի՝ եկող տարի այս օրը պիտի քառատոն դառնար: Սակայն աւաղ, օրը

նշանաւորուեց միայն ընդդիմութեան հերթական սակաւամարդ, այս անգամ՝ 7700 հոգանոց հանրահաւաքով: Սա ԻՔՄ հաշուարկի տուեալներն են:

Մօտ 7000 հոգին երեւի բաւարար է 2-3 պապիկ ծեծելու համար, սակայն իշխանագաւթման համար՝ ոչ, ու հաշուի առնելով փաստը, որ Մայիսի 1-ի հանրահաւաքի հետ համեմատութեամբ այս մէկը մօտ երկու անգամ աւելի սակաւամարդ էր, ապա հանրահաշվական խնդիր է հաշուելը, թէ քանի օր յետոյ հրապարակում միայնակ կը մնայ իշխան Սաղաթեւանը եւ կը փորձի ինքն իրեն ներկայացնել ձեւաւորելիք կառավարութեան կազմն ու նպատակները:

«Civic.am»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏԵՕՐԵՆ
ՎԱՂԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Կիւմրիի Մեջ Տարեց Տղամարդոց Նկատմամբ Բռնութիւն Գործադրելու Դէպքով Կան Ձերբակալուածներ



Երեւանէն եկած ցուցարարները Կիւմրիի մէջ բռնութիւն կը գործադրեն տարեցներու նկատմամբ

Պարզուած է Կիւմրիի Երեւանեան խճուղիին մէջ, ընդդիմութեան կողմէ կազմակերպուած երթի ընթացքին, տարեց տղամարդոց նկատմամբ բռնութիւն գործադրած երիտասարդներէն երեքին ինքնուրուիւնը, կը յայտնէ Քննչական կոմիտէն:

ՔԿ-ի հաղորդմամբ՝ անոնցմէ մէկը Արագածոտնի մարզի՝ 1991-ի ծնունդ բնակիչ Գոռ Սարգսեանն է, միւսը՝ Երեւան քաղաքի՝ 1999-ի ծնունդ բնակիչ Տարօն Մանուկեանը, իսկ երրորդը՝ Արարատի մարզի բնակիչ՝ 1990-ի ծնունդ Արսէն Մարտոյեանն է:

Գոռ Սարգսեանը եւ Տարօն Մանուկեանը ձերբակալուած են, իսկ Արսէն Մարտոյեանը ներգրաւուած է որպէս մեղադրեալ եւ անոր նկատմամբ կալանաւորուած որպէս խափանման միջոց ընտրելու համար քննիչը որոշում կայացուցած է վերջինս ձերբակալելու մասին:

Քննչական կոմիտէն կը հաղորդէ, որ նախաքննութիւնը կը

շարունակուի: Միջոցներ կը ձեռնարկուին միջադէպին մասնակից միւս անձերուն ինքնուրուիւնը պարզելու եւ անոնց արարքներուն համապատասխան քրէախրաւական գնահատական տալու ուղղութեամբ: Կիւմրիի Երեւանեան խճուղիին մէջ կանգնած քաղաքայիններուն եւ ընդդիմութեան երթի մասնակիցներուն միջեւ տեղի ունեցած վիճաբանութեան մասին Քննչական կոմիտէն հաղորդած է երկէ:

Գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեան ըսած է, որ դէպքին առթիւ յարուցուած է քրէական գործ Քրէական Օրէնսագիրքի 258-րդ յօդուածի 4-րդ մասի յատկանիշներով՝ խուլիկանութիւնը, որ կատարուած է զէնքի կամ որպէս զէնք օգտագործող առարկաներու գործադրմամբ:

Նախաքննութեան ընթացքին պարզուած է տուժած տղամարդոց ինքնուրուիւնը, որոնք 74, 56, 72 եւ 84 տարեկան քաղաքացիներ են:

Քոչարեանի Պաշտպանը Միջնորդեց Կաշառքի Գործով Ապացոյցները Յետազօտել Դռնփակ Նիստով

Մայիս 10-ին կայացաւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի ու ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Արմէն Գէորգեանի գործով հերթական դատական նիստը: Դատաւոր Աննա Դանիբեկեան նշեց, որ պաշտպանական կողմէն երեք միջնորդութիւն ստացուած է Ռոպերթ Քոչարեանի խափանման միջոցը փոխելու վերաբերեալ, ինչպէս նաեւ Արմէն Գէորգեանին ՀՀ-էն ժամանակաւոր բացակայելու թույլտուութեան եւ նախաքննութեան ընթացքին քննիչ Հրաչեայ Մուշեղեանի հաւաքագրած ապացոյցները անթույլատրելի ճանչնալու մասին:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Գէորգեանը նշեց, որ իր բացակայութիւնը կը նախատեսուի Մայիս 17-20, որպէս ԵՆԽՎ պատգամաւոր:

Մեղադրող դատախազը նշեց, որ այս միջնորդութիւնները կը ներկայացուին այն միտումով, որ գործով ապացոյցներու հետազօտութեան փուլը հնարաւորինս ձգձգուի, հետեւաբար այդ միջնորդութիւններուն համար առանձին ժամանակահատուած պէտք է տրա-

մադրուի: Եւ երբ դատաւոր Աննա Դանիբեկեանը կը պատրաստուէր անցնելու ապացոյցներու հետազօտութեան փուլ, Արմէն Գէորգեանի պաշտպան Լուսինէ Սահակեանը միջնորդեց դատարանին տրամադրել հինգ վայրկեան ընդմիջում իր ամբաստանեալին հետ դուրսը խորհրդակցելու համար, սակայն դատաւորը պահանջեց ներսը ցած ձայնով խորհրդակցել: Դատաւորին այդ խօսքէն յետոյ Արմէն Գէորգեանի պաշտպան Լուսինէ Սահակեանն ու Ռոպերթ Քոչարեանի պաշտպանները առանց դատարանի թույլտուութեան լքեցին նիստերու դահլիճը՝ խորհրդակցելու:

Ռոպերթ Քոչարեանի պաշտպան Հայկ Ալուսեանը միջնորդեց դռնփակ կայացնել դատական նիստը, եթէ դատարանը որոշած է այս պահին հետազօտել գործին մէջ առկայ ապացոյցները, եւ ընդգծեց, որ տուեալ միջնորդութիւնը քննարկուի դռնփակ, ինչ որ բաւարարուեցաւ դատարանին կողմէ:

Քոչարեանին եւ Գէորգեանին մեղադրանք առաջադրուած է գործարար Սիլվա Համբարձումեանէն 3 միլիոն տոլար կաշառք վերցնելու համար:

Ընտրակաշառքի Դէպքերու Առթիւ Քրեական Գործ Յարուցուած Է

Հայաստանի ընդդիմութեան կողմէ կազմակերպուած հաւաքներուն մասնակցելու նպատակով Արմավիրի մարզի բնակիչը նիւթապէս շահագրգռելու դէպքին առթիւ, ՀՀ Քննչական կոմիտէին մէջ ՀՀ Քրէական Օրէնսագիրքի 163-րդ յօդուածի 3-րդ մասի 2-րդ կէտով յարուցուած քրէական գործով կատարուած նախաքննութեան ընթացքին խուզարկութիւններ իրականացուած են տուեալ քրէական գործով որպէս մեղադրեալ ներգրաւուած անձերու բնակութեան վայրերուն մէջ:

Կատարուած խուզարկութեամբ, 2022 թուականի Մայիս 6-ին ՀՅԴ-ի Արմավիրի Տարածքային Մարմինի ղեկավար Ա.Մ.-ի բնակութեան վայրին մէջ յայտնաբերուած են ձեռագիր գրառումներով նոթատետրեր, որոնք բովանդակած են 2021 թուականին տեղի ունեցած Ազգային ժողովի եւ Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրութիւններուն ժամանակ ընտրողներուն տարբեր չափերու կաշառք տալու վերաբերեալ տեղեկութիւններ:

Ըստ քրէական գործի նիւթերուն՝ նոթատետրերուն գննութեամբ պարզուած է, որ անոնց մէջ, մասնաւորապէս, ներառուած են ձեռագիր նշումներ 2021 թուականի Յունիս 20-ին ՀՀ-ի մէջ տեղի ունեցած Աժ արտահերթ ընտրութիւններուն առթիւ նոյն թուականի Յունիս 4-էն Յունիս 21 ինկած ժամանակահատուածին ՀՅԴ Գերագոյն Մարմինէն, ՀՅԴ Մարզային Կառուցցէն ու անոր Նախընտրական Շտաբէն յատկացուած դրամական միջոցներու եւ նշուած ժամանակահատուածին բազմաթիւ անձերու միջինը 15.000-20.000-ական, ընդհանուր՝ շուրջ 6.470.000 ՀՀ դրամի գումարներ բաշխելու վերաբերեալ: Ի դէպ, Աժ արտահերթ ընտրութիւններուն ՀՅԴ-ն մասնակցած է «Հայաստան» դա-

շինքի կազմին մէջ, եւ ընտրութիւններու նախընտրական քարոզարշաւի ծիրին մէջ կուսակցութեան աշխատանքները համակարգուած են Արմավիր քաղաքին մէջ գործող գրասենեակէն՝ Ա.Մ.-ի կողմէ:

Բացի այդ, նոթատետրերուն մէջ առկայ են ձեռագիր գրառումներ նաեւ 2021 թուականի Դեկտեմբեր 5-ին Արմավիրի մարզին մէջ տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւններուն առնչութեամբ 2021 թուականի Նոյեմբեր 4-էն Դեկտեմբեր 5 ինկած ժամանակահատուածին ՀՅԴ Գերագոյն Մարմինէն, ՀՅԴ Մարզային Կառուցցէն ու անոր Նախընտրական Շտաբէն յատկացուած դրամական միջոցներու եւ նշուած ժամանակահատուածին մէջ բազմաթիւ անձերու 5000-20.000-ական, ընդհանուր՝ շուրջ 3.513.000 ՀՀ դրամի գումարներ բաշխելու վերաբերեալ:

ՀՀ Ազգային ժողովի եւ Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրութիւններու ընթացքին առերեսութ ընտրակաշառք տալու եւ ստանալու մասին կը փաստեն, մասնաւորապէս, նոթատետրերուն մէջ տարբեր անձերու տուեալներու դիմաց կատարուած՝ «ՅԱՏԿԱՅՈՒՄ ԳՄ-էն», «ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ՄԿ-էն» եւ «ՅԱՏԿԱՅՈՒՄ ՇՏԱԲԷՆ» ձեռագիր գրառումներն ու ընտրակաշառք տալու եւ ստանալու հաշուարկները:

Յայտնաբերուած եւ առգրաւուած են տարբեր ցուցակներ, այդ շարքին՝ գումարային նշումներով: Կը կատարուին անհրաժեշտ քննչական գործողութիւններ եւ որոնողական միջոցառումներ՝ յիշեալ ցուցակներուն մէջ ներառուած անձերուն ինքնուրուիւնը պարզելու, նոյնականացնելու, ինչպէս նաեւ կաշառք ստանալու եւ տալու դէպքերուն հանգամանքներն ու անոնց առնչուած անձերը պարզելու ուղղութեամբ:

Պետք է Համակերպուին Ժողովուրդի Քուէին Հետ. Արսէն Թորոսեան

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան ներքաղաքական ճգնաժամ չի տեսներ: Խմբակցութեան պատգամաւոր Արսէն Թորոսեանի խօսքով՝ մէկ անգամ չստացուած եւ ժողովուրդին քուէով մարած շարժումը ընդդիմութիւնը կը փորձէ դարձեալ արթնանալ, որ, ըստ անոր, յաջողութիւն պիտի չունենայ: Պատգամաւորը կը պնդէ, որ վարչապետի հրաժարականին պահանջով փողոց դուրս եկած ընդդիմութիւնը կեղծ օրակարգ ունի:

«Մենք ներքաղաքական ճգնաժամ չենք տեսնում, եթէ շատ անկեղծ ասեմ, նոյնիսկ անցեալ տարի էլ տեսնում էինք մասամբ, երբ որ գնացինք լուծումների: Եւ չի կարելի պարզապէս, ասենք, 3-4 ամիսը մէկ արտահերթ ընտրութիւններ անել եւ ասել, որ քանի որ փողոցում կան մեր 12 հազար քաղաքացի կամ 50 հազար քաղաքացի, կապ չունի, մենք պէտք է գնանք արտահերթ ընտրութիւններ: Արտահերթ ընտրութիւնները եղել են, եղել են ազատ եւ արդար, ինչպէս են նախկին ընտրութիւնները, եւ կը լինեն հերթական ընտրութիւններ 2026 թուականին:

«Կարծում եմ՝ պէտք է ողջամ-



Պատգամաւոր Արսէն Թորոսեան

տութիւնը, այնուամենայնիւ, իրենց մօտ էլ, իրենց մտքում էլ յաղթի, եւ հասկանանք՝ ուր են գնում. ի վերջոյ, գալիս են կառուցողական բանավէճի, որը, ի դէպ, ես մօտաւորապէս համարում եմ, որ կամուրջները գրեթէ այրուած են այդ առումով, իրենք են այլընտրանք, թէ պէտք է յարձակողականի տանեն, որպէսզի սեւերես չլինեն իրենց աջակիցներու առաջ: Դա էլ, գիտէք, ինչի է բերում»:

ԼՈՒՐԵՐ

Պարուին Փոխանցուած 6-Կէտերուն Մէջ Կայ Արցախի Վերջնական Կարգավիճակի Հարցը. Մարուքեան

Ապրիլ 6-ին Պրիւքսէլի մէջ տեղի ունեցած եռակողմ հանդիպման ընթացքին Երեւանը նաեւ առձեռն Պաքուին փոխանցած է 6-կէտնոց փաստաթուղթը, որ կը ներառէ նաեւ Լեռնային Ղարաբաղի հայութեան անվտանգութեան, իրաւունքներու պաշտպանութեան եւ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը, ըսած է Հայաստանի յատուկ յանձնարարութիւններով ղեկավար Էտմոն Մարուքեանը:

Մարուքեանը շեշտած է, որ հայկական կողմը առաջարկած է երկու օրակարգերու հիման վրայ սկիզբ բանակցութիւններ՝ խաղաղութեան պայմանագրին ուղղութեամբ: Ատրպէյճանական կողմը համաձայնած է այս մօտեցման, որմէ յետոյ խաղաղութեան պայմանագրի բանակցութիւններ ձեռնարկելու պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է:

Այսօր Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պալամոնովը յայտնած էր, որ դեռ փետրուարին ատրպէյճանական կողմը Հայաստանին ներկայացուցած է 5 հիմնական առաջարկներ, որոնք հիմնուած են խաղաղութեան համաձայնագրի հիմնական սկզբունքներու վրայ՝ շեշտելով, որ «սակայն Հայաստանը նշած է, թէ անոնք իրենց յարմար չեն»:

Չնշելով թէ Երեւանը ինչ առաջարկներ ներկայացուցած է, Պալամոնով նաեւ յայտնած է, որ Հայաստանի ներկայացուցած փաս-



Յատուկ յանձնարարութիւններով ղեկավար Էտմոն Մարուքեան

տաթուղթը դժուար է առաջարկ անուանել: Անոր բնորոշմամբ, «հայկական կողմի փաստաթուղթը եղած է հակազդման տեսքով՝ ընդդէմ Ատրպէյճանի առաջարկներուն»:

Պաշտօնական Երեւանը յայտարարած էր, որ Պաքուէն Երեւանին փոխանցուած առաջարկներուն մէջ մեծ հաշուով անընդունելի ոչինչ կայ: Աւելի ուշ, ընդհանրական խօսելով Երեւանի պատասխանին մասին, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը ըսած էր, որ հայկական կողմին համար «սկզբունքային եւ հիմնարար է, որ յատուկ երաշխաւորուին արցախահայութեան իրաւունքները եւ ազատութիւնները, վերջնականապէս յստակացուի Ղարաբաղի կարգավիճակը»:

Ըստ Պայրամովի՝ Սահմանազատման Յանձնաժողովի Կազմը Պատրաստ Է

Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պալամոնովը յայտնած է, որ Պաքու եւ Երեւանը համաձայնեցուցած են ատրպէյճանա-հայկական սահմանի սահմանազատման հարցերով համատեղ յանձնաժողովի կազմը:

«Յանձնաժողովի առաջին նիստը կը նախատեսուէր կայացնել մինչեւ Ապրիլի վերջ: Անկէ յետոյ ես երկու հեռախօսազրոյց ունեցած եմ Հայաստանի արտաքին գործերու նախարարին հետ: Հեռախօսազրոյցներու ընթացքին մենք ներկայացուցած ենք մեր առաջարկները յանձնաժողովի կազմին վերաբերեալ», ըսած է Պալամոնով:

Ատրպէյճանի դիւանագիտութեան ղեկավարը ընդգծած է, որ ատրպէյճանական կողմը Երեւանին առաջարկած է աւելի բարձր մակարդակով յանձնաժողով կազմակերպել:

«Հաշուի առնելով հարեւան այլ երկիրներու հետ հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման գործընթացի շարք մը առանձնաշատկութիւններ եւ տարբերութիւններ, մեր առաջարկն էր, որ յանձնաժողովը կազմակերպուի այլ ձեւաչափով, այն ղեկավարուի աւելի բարձր մակարդակով: Ատրպէյճանական կողմին առաջարկը այն էր, որ ատրպէյճանական կողմին յանձնաժողովը ղեկավարող անձը ըլլայ փոխվարչապետի մակարդա-



Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պալամոնով

կով», ըսած է ան:

Պալամոնովի խօսքերով՝ Պաքուն եւ Երեւանը համաձայնութեան եկած են յանձնաժողովի կազմին շուրջ:

«Հայկական կողմը ընդունած է մեր առաջարկը: Կողմերը պայմանաւորուածութիւն ձեռք բերած են յանձնաժողովի կազմին շուրջ: Սակայն, ինչպէս արդէն նշած ենք, առաջին նիստը դեռ չէ կայացած: Մենք պատրաստ ենք նիստին», յայտնած է Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարը:

Սիրզոյեան Առանձին Հանդիպումներ Ունեցած Է Ծերակուտականներ Մաքրոնէլի Եւ Մենենտեսի Հետ



Արարատ Սիրզոյեան Ծերակոյտի հանրապետականներու ղեկավար Սիբէ Մաքրոնէլի հետ կայացած հանդիպումի ընթացքին

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Սիրզոյեանը Ուաշինկթընի մէջ առանձին հանդիպումներ ունեցած է ԱՄՆ Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ, ծերակուտական Պոպ Մենենտեսի, Ծերակոյտի հանրապետականներու ղեկավար Միթչ Մաքրոնէլի հետ:

Սիրզոյեանը Մենենտեսի հետ քննարկած է Հայ-ամերիկեան յարաբերութիւններու օրակարգը, Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծուած անվտանգային իրադրութիւնը եւ տարածաշրջանային իրավիճակի հարցեր, ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի մէջ առկայ մարդասիրական իրավիճակը եւ դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման շուրջ Հայաստանի դիրքորոշումը: Այս ծիրին մէջ շեշտուած է Ատրպէյճանի կողմէ լարուածութեան հրահրման անթոյլատրելիութիւնը: Ընդգծուած է Ատրպէյճանի մէջ պահուող հայ ռազմագերիներուն ու քաղաքացիական պատանդներուն հայրենադարձման անհրաժեշտութիւնը:

Արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը ներկայացուցած է նաեւ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւն-

ներու կարգաւորման ուղղուած վերջին զարգացումները:

Մաքրոնէլի հետ հանդիպման ընթացքին Սիրզոյեան ընդգծած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղուած ԱՄՆ միջնորդական ջանքերուն կարեւորութիւնը՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի խմբակի համաձայնագրահանգստի պետութիւն:

Նախարար Սիրզոյեան որպէս հիմնական բանախօս մասնակցած է ամերիկեան հեղինակաւոր Atlantic Council ուղեղային կեդրոնին մէջ տեղի ունեցած կլոր սեղան?քննարկման:

Սիրզոյեան անդրադարձած է ԱՄՆ Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխօսութեան, այցի ընթացքին ստորագրուած փաստաթուղթերուն եւ հայ-ամերիկեան յարաբերութիւններու զարգացման հեռանկարներուն:

Սիրզոյեան ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան շուրջ ստեղծուած իրավիճակը եւ Հայաստանի դիրքորոշումը՝ Ատրպէյճանի հետ խաղաղութեան համապարփակ պայմանագրի շուրջ բանակցութիւններուն, այս գործընթացներուն մէջ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համաձայնագրահանգստի ղեկին վերաբերեալ:

Ալիեւը Յայտարարած Է, Թէ Չանգեզուրի Միջանցքը «Արդէն Իրականութիւն Է»

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ յայտնած է, որ Չանգեզուրի միջանցքը իրականութիւն է:

«Միեւնոյն ժամանակ, ներկայիս Չանգեզուրի շրջանին մէջ ենթակառուցուած քային մեծ նախագիծեր կ'իրականացուին: Կը փափաքէի անոնցմէ նշել փոխադրական ենթակառուցուածքը, որ կը հանդիսանայ Չանգեզուրի միջանցքի հիմնական մասը», յայտնած է Ատրպէյճանի նախագահը Չանգեզուրի շրջանին մէջ նախագահի յատուկ ներկայացուցիչ նշանակուած Վահիտ Հաճիբեի հետ հեռավար հանդիպման ընթացքին:

Ալիեւի խօսքերով, յառաջիկայ ամիսներուն Չանգեզուրի մէջ շահագործման պիտի յանձնուի միջանցքային օդակայան, որ «պիտի դառնայ տնտեսական, փոխադրա-

կան դէ անվտանգութեան հարցերը լուծելու կարեւոր միջոց»:

«Ինչ կը վերաբերի Չանգեզուրի միջանցքին, ապա այս միջանցքը արդէն իրականութիւն է: Ե՛ւ երկաթգիծը, ե՛ւ Չանգեզուրի շրջանի տարածքով անցնող մայրուղին ոչ միայն պիտի կապէ Ատրպէյճանի հիմնական մասը Նախիջեւանի ինքնավար Հանրապետութեան հետ, այլեւ պիտի դառնայ միջազգային բեռնափոխադրումներու նոր երթուղի, պիտի ըլլայ միջազգային երթուղի»:

Ի պատասխան Չանգեզուրի ինքնիշխան միջանցքի բացման մասին պաշտօնական Պաքուի յայտարարութիւններուն, Երեւանը մշտապէս շեշտած է, որ եռակողմ յայտարարութիւններուն մէջ «միջանցքային տրամաբանութիւն չկայ»:

Հայաստանի Կառավարութիւնը Որոշած Է Լաստանաւային Փոխադրումներ Կատաել



ՀՀ կառավարութիւնը իր նիստին ընդունեց որոշում, ըստ որում՝ Յունիս 15-էն հայկական ներմուծող ու արտահանող ընկերութիւնները պիտի կարենան օգտուել լաստանաւային փոխադրումներէն՝ որպէս այլընտրանք վերին Լարսի անցակէտին: Կառավարութիւնը կը հիմնաւորէ, որ այսպիսով Հայաստանի երկաթուղային համակարգը լաստանաւի միջոցով կանոնաւոր կապ պիտի ունենայ եւրասիական երկաթուղային համակարգին հետ: Որոշուած է, որ կառավարութիւնը օժանդակութիւն պիտի յատկանցէ լաստանաւային փոխադրումներուն, որուն շնորհիւ՝ փոխադրողը պիտի վճարէ միայն երկաթուղային փոխադրումներու համար, իսկ լաստանաւով տեղափոխելու ամբողջ ծախսը պիտի փոխհատուցէ կառավարութիւնը: Այս որոշումը ընդունուած է, քանի որ վերջին շրջանին վերին Լարսի անցակէտի թողունակութեան հետ կապուած խնդիրներ կան, անցակէտին մէջ հսկայական հերթեր կը գոյանան:

Գործատուներու Հանրապետական Միութեան նախագահ Գագիկ

Մակարեանի խօսքով՝ լաստանաւի տարբերակին գործարարները կը սպասէին: Լաւ է, որ պետութիւնն այդ հարցը լուծում է, որովհետեւ ուրբանական պատերազմի հետեւանքով Սեւծովեան աւազանով երթեկուցութիւնը բարդացած է, անվտանգութեան խնդիրներ կան: Եւ շատերն արդէն վերին Լարսով են բեռները տանում, ոչ միայն Հայաստանը, այլ նաեւ՝ Թուրքիան, Վրաստանը, Պելառուսիան, որոշ դէպքերում՝ նաեւ Ատրպէյճանը:

«Այստեղ կարելոր է, որ մենք ծովային երթեկուցութեան առումով խնդիրներ չունենանք՝ պայմանաւորուած Ուրբանիայում պատերազմով», ըսաւ Մակարեանը:

Գագիկ Մակարեանի խօսքով՝ կառավարութիւնը լաւ կ'ընէ, եթէ արտահանողներուն ու ներմուծողներուն աջակցելու համար նաեւ շարժումներ թուրքերը կազմակերպէ բեռնատար ինքնաթիռներու միջոցով՝ օժանդակութիւն յատկացնելով այդ թռիչքներուն: Ինքնաթիռը շատ կարճ ժամանակահատուածի մէջ կրնայ առնուազն 5 բեռնատար բեռ տեղափոխել, իսկ ծախսերը այդքան ալ մեծ չեն:

Տեղի Ունեցած Են Հայաստան-Յունաստան-Կիպրոս Եռակողմ Ծրագրաւորման Խորհրդակցութիւններ

Մայիս 10-ին ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան վարչական համալիրին մէջ տեղի ունեցած են պաշտպանութեան բնագաւառին մէջ Հայաստան-Յունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցութեան ծրագրաւորման խորհրդակցութիւններ:

Խորհրդակցութիւններուն մասնակցած են ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան Պաշտպանական Քաղաքականութեան եւ Միջազգային Համագործակցութեան վարչութեան պետ Լեւոն Այվազեանի, Յունաստանի Ազգային Պաշտպանութեան Գլխաւոր Շտաբի Ռազմական Համագործակցութեան Մրագրաւորման եւ Իրականացման վարչութեան պետ, գնդապետ Սոկրատիս Սերվեսի, Կիպրոսի Ազգային Կվարտիայի Ռազմավարութեան եւ Քաղաքականութեան վարչութեան պետ, գնդապետ Լուքաս Հաճիքոնիսիանի թիւրոսի գլխաւորած պատուիրակութիւնները:

Հանդիպման ընթացքին ամփոփուած են Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի միջեւ երկկողմ եւ եռակողմ ձեւաչափերով իրականացուող ռազմական համագործակցութեան ծրագրերը:

Տարածաշրջանային Խաղաղութիւն Է

Շարունակուած էջ 1-էն

Պետութեան ղեկավարը կը վստահեցնէ, որ «ժողովրդի քուէն ստացած քաղաքական մեծամասնութիւնը Հայաստանն առաջնորդում է հէնց այս ճանապարհով՝ հասկանալով այն բոլոր դժուարութիւնները, որ ի յայտ են գալու»:

«Մենք պատրաստ ենք առերեսուել այդ դժուարութիւններին, որովհետեւ մեզ առաջնորդում է համոզմունքը, որ այդ մենք շարժուում ենք դժուար, բայց ճիշդ ճանապարհով»:

«Մենք մեր երկրի վրայ թափուած աղէտների հեղինակը չենք, մենք արժանացել ենք դաժան ճակատագրի ու սրբագոյն առաքելութեան, առաջնորդել մեր Հայրենիքը անխուսափելի եւ երկար տարիներ բոլորիս աչքի առաջ նիւթուած աղէտների միջով եւ նրան հասցնել խաղաղ, բարեկեցիկ, երջանիկ ապագայի», նշուած է ուղերձին մէջ:

Հայաստանի բարձրագոյն ղեկավարութիւնը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, նախագահ Վահագն Խաչատուրեանի եւ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի գլխաւորութեամբ, այցելած է «Եռաբլուր» գինուորական պանթէոն եւ յարգանքի տուրք մատուցած է Հայրենիքի անկախութեան համար զոհուածներու յիշատակին:

Պետութեան ղեկավարները ծաղիկներ եւ ծաղիկեպսակներ դրած են սպարապետ Վազգէն Սարգսեանի, Անդրանիկ Օզանեանի շիրիմներուն եւ զոհուած ազատամարտիկներուն յիշատակը յաւերժացնող յուշահամալիրին:

Ապահով եւ անվտանգ հայրենիք պահելու ուղերձ յղած է նաեւ նախագահ Վահագն Խաչատուրեանը: Ուղերձին մէջ մասնաւորապէս ըսուած է. «77 տարի առաջ հայ ժողովուրդը ԽՍՀՄ միւս ժողովուրդները ու յառաջող մարդկութեան հետ միասին յաղթանակ

ցութեան ծիրին մէջ նախորդ տարիներուն կատարուած աշխատանքները, քննարկուած են համագործակցութեան զարգացման հեռանկարները:

Զրուցակիցները քննարկած են նաեւ տարածաշրջանային անվտանգութեան եւ միջազգային զարգացումներուն վերաբերող հարցեր: ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան Պաշտպանական Քաղաքականութեան եւ Միջազգային Համագործակցութեան վարչութեան պետը ներկայացուցած է իրադրութիւնը հայ-ատրպէյճանական սահմանին եւ Արցախի մէջ, ընդգծած է տարածաշրջանին մէջ կայունութեան եւ խաղաղութեան հաստատման ջանքերուն անհրաժեշտութիւնը:

Խորհրդակցութիւններու ընթացքին ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու հիման վրայ ստորագրուած են 2022 թուականի Հայաստանի եւ Յունաստանի միջեւ երկկողմ ռազմական համագործակցութեան ծրագիրը եւ Հայաստան-Յունաստան-Կիպրոս եռակողմ ռազմական համագործակցութեան գործողութիւններու ծրագիրը:

տարաւ ֆաշիզմի դէմ մղած մեծ պատերազմում: Հայերս մեր արժանի աւանդը ներդրեցինք այդ պայքարում: Պատերազմ մեկնած 600 հազար հայորդիներից 300 հազարը չվերադարձան մարտի դաշտից»:

«Մեր ընդհանուր պարտքն է առյաւէտ պահել ազատութեան եւ անկախութեան համար մղուած մարտերում ընկած մեր հերոսների յիշատակը, միաժամանակ չմոռանալով վեթերաններին:

Մեր ժողովուրդը լաւ գիտի խաղաղութեան գինը: Ապահով անվտանգ հայրենիք պահելը մեր բոլորի սուրբ պարտքն է եւ մենք ամէն ջանք պետք է գործադրենք ամրապնդելու մեր երկրի պաշտպանունակութիւնը», նշուած է ուղերձին մէջ, որ հրապարակուած է Հայաստանի նախագահի պաշտօնական կայքէջին մէջ:

Արցախի նախագահ Արայիկ Թարուսիւնեանը Ստեփանակերտի յուշահամալիրին մէջ ծաղիկեպսակ ու ծաղիկներ դրած է Մեծ Հայրենականին զոհուածներուն յիշատակը յաւերժացնող յուշարձանին եւ Արցախեան ազատամարտի նահատակներու շիրիմներուն:

Յարուսիւնեանին ուղեկցած են Արցախի պետական եւ գինուորական բարձրաստիճան ղեկավարութիւնը, օրէնսդիր մարմինի ներկայացուցիչներ՝ խորհրդարանի նախագահ Արթուր Թովմասեանի գլխաւորութեամբ:

Առաւօտեան ժամը 11-ին Արցախի մէջ յայտարարուած է լուծութեան ըրպէ՝ ի յիշատակ Մեծ Հայրենականին, Արցախեան առաջին, Ապրիլեան եւ 44-օրեայ պատերազմներուն զոհուածներուն: Անկէ ետք շարք մը միջոցառումներ տեղի ունեցան, մասնաւորապէս՝ Ստեփանակերտի Աստուածամօր Սուրբ Հովանի Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ ի յիշատակ չորս պատերազմներու նահատակուածներուն:

ԱՄՆ Արդարադատութեան Բաժանմունքը

Շարունակուած էջ 1-էն

հարկային արտօնեալ պայմաններու դիմաց:

Գումարը վճարուած է Հայաստանի նախկին ելեւմուտքի նախարարին եւ անոր որդիներուն: Բողոքին համաձայն՝ շքեղ առանձնատունը 2011-ին 14,4 միլիոն տոլարով գնուած է Գագիկ Խաչատրեանի եւ անոր երկու որդիներուն անունով:

Խաչատրեանը 2008-2014 թուականներուն եղած է ՀՀ ՊԵԿ նախագահը, իսկ 2014-2016 թուականներուն՝ Ելեւմուտքի նախարարը:

Ըստ մեղադրանքին՝ այդ գումարին մէկ մասը ծախսուած է Հոլմպի Հիլզի առանձնատան գնման նպատակով: Դաշնակցային կառավարութիւնը կը պնդէ, որ տունը ապօրինի գնուած է օտարերկրեայ պետութեան դէմ կատարուած յան-

ցագործութենէն ստացուած հասոյթով, որ կը վերաբերի պետական պաշտօնեայի կաշառակերութեան:

Հաղորդագրութեան համաձայն՝ առանձնատան հետ կապուած գործարքը հետաքննուած է Հետաքննութիւններու Դաշնային Բիւրօյի (FBI) Եւրասիական Կազմակերպութեան Յանցաւորութեան Դէմ Պայքարի Խումբին (EOCTF) եւ ԱՄՆ Մարշալներու Ծառայութեան կողմէ: ՀՀ Գլխաւոր Դատախազութիւնը եւ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը ցուցաբերած են առանցքային օգնութիւն:

Առանձնատունը ներկայիս վաճառքի հանուած է 63,5 միլիոն տոլարով: Ֆրանսական նորմանտական ոճով այդ կալուածքը ունի 11 ննջասենեակ եւ 26 լոգարան, կը ներառէ լողաւազան, գինիի նկուղ, տնային շարժապատկերի սրահ եւ սպասուհիներու թաղամաս՝ ըստ անշարժ գոյքի ցուցակներուն:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 Massis2@earthlink.net (626) 797-7680

Տիարպաքրի Ս. Կիկակոս Եկեղեցին Վերանորոգուած



Կիրակի Մայիս 8-ին Տիարպաքրի Ս. Կիրակոս Եկեղեցին օծուեցաւ ու պաշտամունքի վերաբացուեցաւ մեծահանդէս արարողութիւններով, որոնց նախագահեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Սահակ Ս. Արք. Մաշալեան:

Ս. Կիրակոս Եկեղեցին Մերձաւոր Արեւելքի մեծագոյն հայկական տաճարն է եւ երկար ժամանակ խլած է վերանորոգումը Պատրիարքական Աթոռի ջանքերով:

Այս առթիւ Պատրիարքական Աթոռի հովանաւորութեան ներքեւ ուխտագնացութիւն մը կազմակերպուեցաւ դէպի Տիարպաքր: Ուխտաւորներու հոծ բազմութիւնը շէնցուց պատմական աղօթաւայրը, որը սրբազան կամարներուն տակ դարձեալ տիրեց հոգեւոր ուրախութեան մթնոլորտ:

Անդրանիկ Ս. Պատարագի ընթացքին «Էջմիածինն ի Հօրէջ» շարականի երգեցողութեամբ հանդիսաւորապէս վերաբերուեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որով Տիարպաքրի Ս. Կիրակոս Եկեղեցւոյ

ծխական խորհուրդի ատենապետ էրկին Ալըքին շնորհուեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ս. Սահակ Ս. Մեսրոպ» շքանշանը՝ ի գնահատումն իր ծառայութիւններուն: Կոնդակը ընթերցեց Տ. Յովնան Եպսկ. Յակոբեան:

Ս. Պատարագի աւարտին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ՝ Տիգրանակերտի թեմի հանգուցեալ առաջնորդներու, հոգեւոր սպասաւորներու, հաւատացեալներու եւ այս Եկեղեցւոյ վերջին երկու հովիւներուն՝ վախճանեալք Տ. Կիրակոս Քհնյ. Թոքաթլեանի եւ Տ. Վարագ Քհնյ. Պէլլէրեանի յիշատակին:

Կրօնական արարողութիւններէն վերջ եկեղեցւոյ պարտէզին մէջ մատուցուեցաւ սիրոյ ճաշ, որմէ վերջ տեղի ունեցաւ նաեւ խորհրդակատարութիւն: Այս փուլին կատարուեցաւ չորս մկրտութիւն եւ մէկ պսակ: Ուխտագնացութեան ծիրէն ներս այցելութիւն մըն ալ տրուեցաւ տեղւոյն հայոց գերեզմանատունը, ուր ընդհանուր հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ:

Հայաստանի Արտաքին Քաղաքականութեան

Շարունակուած էջ 1-էն

զգուշացումներուն հետ:

Այս բոլորը կու գան վկայելու որ, Միացեալ Նահանգները հետամուտ է լայն դուռով վերադառնալ Հարաւային Կովկաս եւ պատրաստ չէ այդ կարեւոր տարածաշրջանը զիջելու Ռուսաստանին ու Թուրքիային:

Այս զարգացումները անվարան պէտք է նկատել յաջողութիւն Հայաստանի վարած արտաքին քաղաքականութեան, որ կը կարողանայ բազմաբեւեռ յարաբերութիւններ մշակել շահաքրքիր բոլոր միջազգային կառոյցներուն հետ, որոնք այս օրերուն անուղղակի պատերազմի մէջ են իրար դէմ: Խօսքը կը վերաբերի Ուքրաինական թատերաբեմին վրայ ընթացող ռազմական գործողութիւններուն՝ մէկ կողմէ Ռուսաստանի եւ միւս կողմէ Ամերիկայի եւ Եւրոպայի միջեւ: Հակառակ միջազգային այս իրավիճակին, Հայաստան կը կարողանայ շատ սահուն կերպով մատուցել բոլորին հետ վարելով բացառապէս իր երկրի ու ժողովուրդի շահերէն բխող արտաքին քաղաքականութիւն:

Շատ մը Հայ վերլուծաբաններ կարծիք կը յայտնեն որ, ուքրաինական պատերազմին պատճառաւ Հայաստան պիտի մատնուի նեղ կացութեան ու ստիպուած է կողմնորոշուելու եւ ենթարկուել

լու Մոսկուայի պահանջներուն: Սակայն, Վարչապետ Փաշինեանի վերջին այցելութիւնը Մոսկուա ու հոն ստորագրուած դաշնակցային յարաբերութիւններու վերաբերեալ պայմանաւորութիւնները չխանգարեցին, որպէսզի նախարար Միրզոյեան այցելէ Ամերիկայի մայրաքաղաքը ու հոն եւս շեշտուին երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող սերտ յարաբերութիւններու կարեւորութիւնները: Նոյնը նաեւ կը վերաբերի նաեւ Եւրոպական Խորհուրդի ներգրաւուածութեան եւ Պրիւքալի մէջ վերջերս Շարլ Միշելի հրաւերով կայացած Փաշինեան-Ալիլիե հանդիպումին:

Հայաստանի իշխանութիւնները կը յաջողին նման քայլերով ընթանալ, որովհետեւ կը վայելեն ժողովուրդի մեծամասնութեան աջակցութիւնը, որ ցայտուն կերպով ի յայտ կու գայ այս օրերուն: Այս իրողութիւնը նկատի առնելով, բոլոր ազդեցիկ մայրաքաղաքները պատրաստակամութիւն կը ցուցաբերեն՝ օժանդակելու տարածաշրջանէն ներս խաղաղութեան հաստատման: Կը մնայ որ երեւան իր միջազգային կապերը օգտագործելով կարողանայ երաշխաւորել Արցախի ապահովութիւնը ու անոր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Լիբանանահայ Նախարարին Անունը Յայտնուած Է Անօրինական Հարստացողներու Վերաբերեալ Փանամայի Փաստաթուղթերուն Մէջ

Լիբանանի արդիւնաբերութեան նախարար եւ երկրի խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններուն Ջահլէ քաղաքի ընտրատարածքին մէջ հայերուն վերապահուած աթոռի պատգամաւորական թեկնածու Ժորժ Պուչիքեանը համալրած է շարքերը այն պաշտօններուն եւ գործարարներուն, որոնց անունները յայտնուած են աշխարհի մէջ անօրինական հարստացողներու վերաբերեալ Փանամայի փաստաթուղթերուն մէջ:

Պուչիքեանը Բրիտանական Վիրճինեան կղզիներուն մէջ 2007 թուականին հիմնած է օֆշորային ընկերութիւն՝ Technor Holdings Limited անուամբ, իսկ Լիբանանի մէջ արձանագրուած ընկերութեան սեփականատիրոջ (այսինքն՝ Ժորժ Պուչիքեանի) հասցէն է՝ «Georges Bouchikian SAR - Center Fouad Chehab - Փողոց՝ Սին Էլ Ֆիլ - Պէյրութ - Լիբանան»:

Մատենան Ողբերգութեան ՀԲ Բանին մէջ, Նարեկի վանականը խօսքը կ'ուղղէ եղբայրակից միանձնեւորուն՝ գրելով «Կ'ըսեմ ձեզի, որոնց նուիրեցի խորտակներու նման խօսքերո այս սեղանը, առէք այս խոստովանութեան աւանդը ձեր հոգիներուն փրկութիւնը շինելու համար» (ՀԲ, ա):

Դարձեալ, Յիշատակարանին մէջ Գրիգոր կը խնդրէ անոնցմէ որ «պիտի ճաշակեն ախորժահամ եւ առատօրէն պատրաստուած այս սեղանին» յիշատակել զինք եւ իր եղբայրը Յովհաննէս:

Ազգէն Ամերիկա Յատորը, ինչպէս որեւէ մեարդատառ թերթիկ կամ թուղթի կտոր, ախորժահամ խորտակներու նարեկեան սեղան է, որմէ ճաշակողներուս կ'իջնայ պարտականութիւնը գործելու մեր հայերէն լեզուին փրկութիւնը, տօնելու մեր ինքնութիւնը սահմանող այս հզօր լեզուին հազարամեայ կեանքը, երգելու անոր համեղ բառերով, աղօթելու անոր խնկաբոց խօսքերով, ինչպէս նաեւ յիշատակելու այդ ոսկեղնիկ պատարկներուն հեղինակները:

Եւ ահաւասիկ, այս երեկոն թող համարուի այդպիսի տօն, թող ըլլայ այդպիսի երգ, թող բարձրանայ որպէս այդպիսի աղօթք, ըլլայ նաեւ յիշատակի արժանավայել ձօն քեզի, սիրելի Ջարմինէ. այդ մեարդակիր մասներուդ հպումով թող շարունակեն ծնիլ նոր Մանուկատներ, թող ստեղծուին կաշմբուռն նոր Հայկեր, գետնին գամելու մեր ինքնութեան դէմ ծառացող ամէն Բեյ, ամէն պարսիկ, ամէն հոռոմբիւզանդացի, ամէն արաբ, ամէն թուրք...

Ազգէն Ամերիկա օրագրութիւնն է հոգիի մը, որ քաջ գիտակից է իր ինքնութեան, հայու ինքնութեան, եւ յաջողօր սերունդները այդ հայու ինքնութեամբ կոփելու գերմարդկային գուպարին ասպարէզէն նոր քաշուած է:



Այս օրագրութիւնը Բանաստեղծին երգած թուրքն է Ջարմինէի մտքին ու հոգիին՝ դէպի հայրենի տունը, իր ինքնութեան կարկաչանոս աղբիւրը, դէպի այն ակութիւն, որուն ջերմութեամբ հասակ առեր էր, իր օրին տալու լեցուն կշիռով, թափաղուն չափով, ատոք հասկերով:

Երբ ստացայ օրինակ մը, զոր Ջարմինէ ազնուօրէն մակագրած էր, կարդացի զայն իսկ եւ իսկ: Մոռցայ անգամ ազդելու իրեն որ ստացեր էի. երբ իրմէ նօթ մը հասաւ՝ իմանալու եթէ ստացեր էի գիրքը, թէ արդեօք սխալ հասցեով դրկած էր զայն, ուրախ էի ըսելու, որ արդէն երրորդ ընթերցում ընթացքին մէջ էի... Նախ կարդացի գիրքը այնպէս ինչպէս դասաւորուած է. երկրորդ անգամ կարդացի զայն ցուցակելով այն անձերը որ ես ալ կը ճանչնայի. երրորդ ընթերցումս կը մղուէր աւելի վերլուծական հետաքրքրութենէ. գրութիւնները ժամանակագրականօրէն դասաւորեցի եւ սկսայ կարդալ անցեալէն դէպի ներկան... գտնելու այդ էջերուն մէջ բաբախող կշռոյթին բուն մղիչը. ի՞նչ էր որ ոյժ տուած էր եւ կու տար հեղինակին կատարելու իր գործը. ուսկի՞ց կը քաղէր ան յարատեւութիւնը դաստիարակի իր կոչման մէջ. ի՞նչպէս կարողացած էր ան հաշտեցնել ընտանիքի մօր եւ մասնագէտ մանկավարժի պահանջները... որպէսզի ես ալ կարողանայի այդ խորտակներուն համեղ պատառներով սնունդ տալ մեր հայու ինքնութիւնը կառուցելու եւ ամուր պահելու գործին: Տեսայ այդ էջերուն մէջ նախ եւ առաջ ինքնութեան հզօր կազմ մը, օր առ օր կերտուած հայ դպրոցին սրբազան պատերէն ներս: Տեսայ Սէրը մեր պատմութեան հանդէպ, մեր լեզուին հանդէպ որ կը կերպաւորէ մեր ինքնութիւնը:

Երկրորդ ծնունդ մը-նոյնքան կարեւոր որքան բնախօսական ծնունդը-որմէ պիտի յառաջ գայ մեր հայու ինքնութիւնը: Ո՞րքան կարող ենք զարգացնել այս փոխարկութիւնը մեր բնական մարդէն դէպի հայ մարդը... այդ հրաշալի այլակերպութիւնը մանուկէն մինչեւ սքանչելի Հայր՝ նման հարսնուկէն մինչեւ գեղեցիկ թիթեռը: Տեսայ այդ էջերուն մէջ նուիրեալ դաստիարակներու անուրանալի դերը այդ ամուր ինքնութիւնը բերնողացնելու գործին մէջ, նման դայիակներու՝ երկրորդ այս ծնունդին:



դին: Տեսայ այդտեղ Եկեղեցիին եւ Ծնողներուն խոր ազդեցութիւնը հայ դպրոցին եւ հայ ուսուցիչին դերը բարձր եւ վեհ պահելուն մէջ: Տեսայ այդ տողերուն մէջ Ջարմինէ վերապրած սերունդին ամենհի գուպարը կորցելու բնաջնջում անդունդն ինկող ամէն աղօթքի շարական, Մեսրոպ Մաշտոցի հանձարին ծնունդ ամէն մէկ գիր, իւրաքանչիւր փշուր հայու մեր մշակութային գանձերուն՝ մերժելով որբանալ եւ կորսուել սուգի եւ դառն չքաւորութեան այդ օրերուն:

Փշուրներ, որոնք կ'իջնային այսպէս կոչուած քաղաքակիրթ եւ զարգացած երկիրներու Առաջին Համաշխարհային Պատերազմին ուրիշ տեսակ ինճոյքի մը սեղանին...


Ազգէն Ամերիկա Ջարմինէ Պողոսեանի հրաւերն է մեր հայու կեանքին եւ յիշատակներուն հրեղէն քուրայով ձուլելու մենք զմեզ ընտիր պողպատ, որպէսզի դիմա-

կալենք մեր ինքնութեան սպառնացող ամէն վտանգ, մանաւանդ անոնք որ մեր վհատութիւններէն կամ անյաջողութիւններէն կը բխին: Սրբազան Հայր, հոգեւոր հայրեր, մեծարգոյ Հիւրեր եւ բարեկամներ, Մաղթանքս է որ Ազգէն բաց նաեւ այն հազարաւոր գաղթակայաններուն, որբանոցներուն, վրանաքաղաքներուն բոց ո հուր երկունքէն վերածնած մեր հզօր ինքնութիւնը յաւերժ բարձրանայ Աստուծոյ ստեղծած մեր երկնակամարին վրայ վահագնի երկնաւայ ճանապարհով եւ չըլլայ երբեք որ մեր ուսուցիչներուն, մայրերուն եւ հայրերուն անձնուէր գործով վերածնած հրաշալի հայ ինքնութիւնը խորտակուի «Ամերիկա» չի բարօրութեան եւ անհոգ առատութեան խաբեպատիր վստահութեան մէջ:

Մաղթանքս է որ մեր ինքնութեան սպառնացող մշակութային թէպետեւ հզօր արգելքները, գուցէ նաեւ դիւրին եւ աժան լուծումներու հրապուրող յուշկապարիկները, չընդեն զմեզ հեռանալու մեր յաւերժութեան ակունքներէն դէպի աներկբայ կորուստ եւ որբութիւն:

Մաղթանքս է որ չհրաժարինք մեր դէպի տուն ողիսական նաւորութեան հուրիւնն իսկ կազմող Մասիսներու հազարամեայ ալեհեր կատարներէն՝ եւ մեր աչքերը սեւեւենք անցնող հազիւ թէ հարիւր եւ քանի մը տարիներու կամարին վրայ առկայծեալ պատրոյզներու, ի վերջոյ անհետ կորելու որբ օտարութեան մը կուտակուող ալիքներուն մէջ:

Մաղթանքս է որ մեր ինքնութեան զրկուած որբեր չդառնանք:



Նոր Տաղանդներ New Talents

**Թեքեան Մշակութային Միութեան
Փաստիւնա Կլէնտէյլ Մասնաճիւղ
TCA Pasadena Glendale Chapter**


Guest Star from Artzakh

Arthur Khatchents

Գեղարուեստական երեկոյ մասնակցութեամբ
երիտասարդ տաղանդներու:

Հիւր արուեստագետ Արցախէն

Արթիւր Խաչէնց



Տեղի կ'ունենայ Կիրակի, Մայիս 15, 2022 ին երեկոյեան
ժամը 6:00 ին, Պէշկէտօթուրեան Կեդրոնին մէջ, Ալլթասիւնա:

An evening of musical and cultural performances by young
talents on Sunday, May 15, 2022 at -6:00 PM at the TCA
Beshgeturian Center, 1901 N Allen Avenue, Altadena CA

Յարգանքի Տուրք Պոլսահայ Բարեկամ Մարտիրոս Պալրգճեանի Յիշատակին

ՅՆՆԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Քառասունչորս տարի առաջ, ճիշդ այս օրերին մեր ողջ ընտանիքը Միլանից վերադառնում էր մեր բնակատեղին՝ Հոռոմ: Մեզ հրաժեշտ տալիս Միլանի երկաթուղային կայարանում ազնուասիրտ, մեծ հայրենասէր, մեր ընտանիքի լավագոյն բարեկամ Մարտիրոս Պալրգճեանի եղբայր Օննիկը զգուշացրեց:

Հենրիկ, Մարտիրոսը գալ շաբաթ ձեզի հիւր պիտի գայ, քաղաքէն չբացակայիք:

Գրեթէ երեք ամիս՝ մենք իտալիացուներէ ենք ոչ մի լուր չկար թէ ե՞րբ են պատկան մարմինները մեզ թոյլ տալու մեկնել Ամերիկա:

Հոռոմի Լեռնեան վարժարանի տեսուչ, երիտասարդական կորոզով լի Հայր Յովսէփ վարդապետը իսկական ուղեկցողի դեր էր կատարում: Իր շուրջը հաւաքելով Միացեալ Նահանգներ մեկնող հայաստանցիներին, իր հաշուոյն, ամէն շաբաթ որեւէ տեսարժան վայր էր մեզ տանում: Արդէն երկու անգամ եղել էինք վատիկանում: Նրա շնորհիւ մենք ներկայ եղանք նաեւ Ս. Յարութեան Տօնի արարողութեանը Սուրբ Պետրոս հրապարակում: Եւ ուր էլ որ տանում էր անմասն վարդապետը՝ չէր թողնում, որ մենք տոմսակ գնենք, աւելին, անկախ նրանից թէ քանի հոգի էր խմբում, բոլորին կերակրում էր համեզ սանդուխներով եւ անմասն պիցայով:

Մենք որոշել էինք այդ Շաբաթ օրը որեւէ տեղ չգնալ: Միտոս վկայում էր, որ Մարտիրոսը կը գայ, կամ էլ կը հեռաձայնի:

Հենջան, արդէն կէսօր է, չեմ կարծում, որ Մարտիրոսը կարող է գալ: Հայր Յովսէփը այսօր մեզ մի լաւ տեղ է տանելու, ընդամէնը երեք ժամ է տեւելու գնալու: Արի հաւաքուենք գնանք, հը, ինչ ես ասում, հօ հսօր չ'եկա՞ւ, ասաց Մարիետան:

Եթէ յարմար ես գտնում գնանք: Գնացի՞ւք, ոգեւորուած ասաց Մարիետան, միայն թէ թոյլ տուէք գնալ Մարիայի մօտ (Մարիան մեր դրացին է, մայրութիւն անել է սովորում Մարիետայից՝ երկու տարեկան աղջկան հոգ տանելու համար) եւ ասեմ որ ուշադիր լինի, Մարտիրոսը կարող է գալ: Եւ, եթէ գալ թող նրան ներս առնի, սուրճ-մուրճ տայ՝ մինչեւ մենք վերադառնանք:

Լեռնեան վարժարանի բակում սպասում ենք, որ ժողովուրդը հաւաքուի, որն ինչպէս միշտ՝ ուշանում է: Միտոս անհանգիստ է: Խնդրում եմ Հոռոմի թեմի Առաջնորդ Ներսէս վարդապետ Սէթեանին՝ թոյլ տալ հեռաձայնել Մարիային: Եւ չեմ սխալուում:

Հենց մենք դռնից դուրս ենք գալիս՝ յայտնում է Մարտիրոսը: Եկել է, եկել է ձեր բարեկամը, բարձրաձայնում է Մարիան:

Ժողովուրդը՝ ետ ենք գնում, շուտ, շուտ արէք, Մարտիրոսը եկել է, ասում եմ ակնապիշ հայեացքով ինձ նայող Մարիետային: Հայր Սէթեանը դժկամութեամբ ընդունեց մեր բացակայութեան փաստը: Պարզում է, որ նա մտադրուել է երեկոյեան մեզ տանել Լեռնեան վարժարանին պատկանող ամառանոցը՝ ընթրիքի:

Հայր Սուրբ, թոյլ մի տուէք,

որպէսզի Անասեանները գնան, մենք ինչ ենք անելու առանց նրանց, ասում է երիտասարդ մայր Նինան:

Ես ինչ կրնամ ընել տղա՞ք... հաւանաբար, իսկապէս կարեւոր է: Ամօթ չըլլայ հարցնելը Պարոն Անասեան, ո՞վ է եկողը եւ ո՞ւր կէ եկած է, ուրիշ երկրէ՞ է:

Այո, շատ կարեւոր է, Հայր Սուրբ, ասաց հայրիկս, Ձեր ծննդավայրէն է, Պոլիսէն:

Օ՛, ինչ կ'ըսէք..., եթէ այդքան կարեւոր է՝ գացէք...: Տղաք, շուտ թաքսի մը կանչեցէք, անկէ ետք մենք ալ կը շարժինք:

Հենրիկ եւ Մարիետա, շրջուելով դէպի մեզ, շարունակում է Հայր Սէթեանը, այս կիրակի վատիկանի Ռադիոյէն մեր Պատարագի օրն է: Չըլլայ որ բացակայիք: Բոլոր մեներգերը Մարիետան պիտի երգէ:

Հայր Սուրբ..., մենք էլ ենք ուզում ներկայ լինել այդ Պատարագին, ասում է իրանահայ վահագր:

Շատ աղէկ, ցանկը կազմեցէք եւ իրիկուան տուէք ինձի:

Այդ վայրկեանին խմբից քիչ հեռու կանգնեց Ֆրատ մականիչի՝ չորս նստատեղով թաքսին:

Ինձի ձգեցէք, ասաց Սուրբ Հայրը եւ արագօրէն մօտեցաւ մեքենային:

Չգիտեմ ինչպէս համոզեց վարորդին՝ վեց անձի սպասարկելու համար, վերջինս դուրս ելաւ մեքենայից, ձեռքով նշան արեց, որպէսզի մօտենանք մեքենային: 1520 րոպէ անց՝ մեր շէնքի առջեւում էինք:

Մի շտապէք, հանգիստ իջէք, Հայր Սուրբը վճարել է: Երջանիկ եղէք, ասաց վարորդը:

Այստեղ նպատակայարմար եմ համարում նշել շատ կարեւոր մի հանգամանք: Թէ Հայր Սէթեանը եւ թէ մնացեալ Հոգեւոր Հայրերը առանձնակի ուշադրութիւն էին դարձնում մեր ընտանիքի նկատմամբ: Եւ, անշուշտ այդ ամէնը աննկատ չէր անցնում մեզ շրջապատող գազթական հայերի ուշադրութիւնից: Տեսնելով Սուրբ Հայրերի ընդգծուած վերաբերմունքը մեր ընտանիքի, յատկապէս հայրիկիս՝ երբեմնի վենետիկի Միթարեանների ասն, նշանաւոր պատմաբան, հայագէտ Յակոբ Անասեանի նկատմամբ, կամայ թէ ակամայ՝ նրանք էլ էին ընդգծուած յարգանք ցուցաբերում մեր բազմամեծ ընտանիքի նկատմամբ:

...Մտնում ենք Մարիայի բնակարանը: Ինչ տեսնենք, որ լաւ լինի, Մարտիրոսը ծնկներին առած Մարիայի պատիկին՝ հաճելի գրոյցով են բռնուած: Ես գիտէի, որ Մարտիրոսը աշխատանքի բերումով քիչմիչ իտալերէն գիտեր:

Վերջին անգամ Մարտիրոսին տեսել ենք նախորդ տարուայ ամռանը՝ Երեւանի մեր տանը: Մանկան հոգու տէր անձնաւորութիւն է նա: Ձաւակներ չունի ու խելքը գնում է մեր տղաների համար: Կիրը՝ Տիրուհին, երեխայի պէս է վարուում այդ յաղթանդամ տղամարդու հետ: Նրանց «կուր» Մարտիրոսի օրը երեք տուփ սիգարետ ծխելու հարցն է: Այստեղ էլ տաքուկ տեղ է գտել: Մարիան էլ է մոլի ծխող:

Լաւ էլ գտել էք իրար, առանց բարեւ բարի լոյսի ասում եմ ես: Մարտիրոսը մէկ առ մէկ փաթաթութիւն է ամէնքիս հետ ու

արցունքները հոսում են աչքերից: Ընդհանրապէս շատ փխրուն սիրտ ունի այդ՝ յիսնամեայ տղամարդը: Աննկարագրելի հայրենասէր է ու անհանդուրժող՝ արտագաղթողներին նկատմամբ:

Այդպէս հա՛... վերջը ելաք Հայաստանէն: Վերջ, վերջ, ալ պիտի չխօսիմ այդ մասին, եղածը՝ եղած է: Հայաստանի մէջ շատ խօսած ենք այդ նիւթի շուրջ:

Ինչո՞ւ լուր չտուիք գալուդ օրուան մասին, կու գայինք, կը դիմաւորէինք, ասում է մայրիկս:

Ինչ պէտք կար ճանըմ: Թաքսի վարորդին հասցէն տուի՝ անմիջապէս բերաւ, տեղ հասցուց:

Տաս օր մնաց մեր բնակարանում Մարտիրոսը: Երանելի, հրաշալի օրեր: Գաղափարի մարդ էր նա ինք եւ Պէրճ Գամպարուտեան քանիցս «ծեծ կերած» են Պոլսի ոստիկանատանը՝ գաւառներից ծպտուած հայեր Պոլիս բերելու համար: Նրա եւ գիտնական հայրիկիս գրոյցները Երեւանի մեր բնակարանում օրեր էին տեւում: Մինչ մենք կնջ էեմ ընթրում էինք ճաշսեփեակում, նա առանձնաւորում էր հայրիկիս հետ նրա աշխատասեփեակում ու ժամեր շարունակ զիտական հարցեր էին շօշափում:

Չարմանալի է, Մարտիրոսը իտալիացու էր եղել, ուստի՝ մենք ենք ուղեկցողի դեր կատարում: Եթէ պատահում է, որ ամբողջ ընտանիքով նրա հետ լինենք, նա միշտ կարողանում է առատաձեռն վճարումով տաքսի ապահովել բոլորիս համար: Մենք արդէն երեք ամիս է, որ իտալիացու ենք:

Չհաշուած Յովսէփ վարդապետի շրջապատյալները, մենք էլ, մեր հերթին, վեր ու վար ենք արել Հոռոմը, իսկ Լուսնապարի մանկուար չքնաղ այգին տղաներիս ամէնօրեայ զբոսավայրի վայրն է եւ իրենք են ինքնուրոյն այգի գնում գալիս:

Վաղը կիրակի է Մարտիրոս: Հայկական Պատարագի օրն է: Ամիսը անգամ մը վատիկանը կենդանի կատարումով Հայկական պատարագ կը սփռէ Եւրոպայի համար: Կ'ուզե՞ս միանալ մեզի, Մարիետան ալ պիտի երգէ, ասում եմ ես:

Ա՛տ ինչ խօսք է Հենրիկ, ինչ հարցում է բարեկամս, անշու՛շտ կ'ուզեմ:

Ուրախացուցի որ ամէնուս եղբայրս: Համա չմոռնաս «ճիտին պարտքը»՝ ամէնուս համար թաքսի ապահովելը:

Ատ ինդիր չէ Հենրիկ..., աս ինչ բարի ժողովուրդ են եղեր սա իտալացիները, բնաւ միտքէս չէր անցնէր:

Քիչ մը կանուխ հոն պիտի ըլլայք, որպէսզի քու անունդ ալ արձանագրենք: Պատարագէն ետք աղուոր տեղ մը կ'երթանք ճաշելու: Հայտէ, հայտէ, շարժուեցէք տղաք: Հայր Սէթեանն է այսօր պատարագիչը: Ան կը սիրէ պատարագէն առաջ յանձնարարութիւններ տալ, եւ, որքան որ գիտեմ, կ'ուզէ այսօրուն պատարագը ձայնագրել եւ ապագային օգտագործել, երբ մենք հոս չենք ըլլար:

Դուրս ենք գալիս փողոց: Մեր ճարպիկ Մարտիրոսը իր գործի վարպետն է: Կանգնեցնում է թաքսիին, վարորդի հետ մի քանի նախադասութիւն փոխանակում եւ՝

Հայտէ, հայտէ, շուտ մը նստեցէք, ուրախացած, որ կարողացել է համոզել վարորդին, որպէսզի ամէնիս վերցնի:

Հիւսնալի Պատարագի արարողութիւն էր: Մարիետան «սպաննեց» ամէնքիս իր հոգեթով, սրտմաշուկ երգեցողութեամբ Մեր ետե-

ւում կանգնած Մարտիրոսը թաշկինակը չէր հեռացնում աչքերից: Պատարագից յետոյ, ամէնքս մեկտեղ լսեցինք ձայնագրութիւնը: Հիւսնալի էր, բնաւ չես ասի, որ այն կատարուած է ափի մեծութեան մի փոքրիկ ձայնագրիչով:

Ապրիլք, շատ ապրիլք տղաք, ես քսակթ ալ կրնամ շինել, եթէ, անշուշտ մեր Մարիետան եւ Հենրիկը արտօնեն, կատակով ասաց Հայր Սէթեանը, իսկ հիմա, սիրելի բարեկամներս, դուք այսօր իմ հիւրս էք: Ձեզի պիտի տանիմ մեր վարժարանի ամառանոցը: Տղաքը մասնաւոր պատրաստութիւն տեսած են ձեզի հիւրասիրելու համար: Որեւէ խօսք կամ առարկութիւն չեմ ուզեր: Ամէնքդ ալ կը տեղաւորուիք օթոյցիս մէջ:

Ճանապարհին, չգիտեմ ինչից դրդուած, Մարտիրոսը հարց տուեց վարդապետին.

Հայր Սուրբ, դուք Կոմիտաս չէ՞ք երգեր:

Բարեկամս, ես լաւ գիտեմ, որ Պոլսոյ մէջ միայն Կոմիտաս կ'երգուի: Մենք Եկմալեան կ'երգենք, քանի մը կտորներ ալ՝ Այուրնեանէն: Հիմա տեղ հասնինք՝ վերջը կը խօսինք նման հարցերու շուրջ: Հիմա քիչ մը արագ վարեմ օթոս, որպէսզի ձեր տղաքը կարենան արեւուն տակ լողաւազան մտնալ:

Փառայեղ ժամանակ անցկացրինք Լեռնեան վարժարանի ամառանոցում, երեք մեծերը իրար գլխի՝ Հայ Ազգի ճակատագիրն էին որոշում: Նոյն գիշերը հեռաձայն եկաւ վալանսից: Երեւանի մեր դրացի Անահիտից, որի ընտանիքին 1972 թուին Մոսկովայից ճանապարհել էի Ֆրանսիա: Վերջինս լսել էր վատիկանի ռադիոյից հաղորդուող պատարագի երգեցողութիւնը եւ չափազանց ազդուել էր Մարիետայի ձայնը լսելով:

Մարտիրոսից առաջ, Անահիտն իր չորսանդամ ընտանիքով վալանսից մեքենայով էր եկել մեզ հիւրութեան ու մէկ շաբաթ ապրել մեզ հետ, մի սենեակում:

Ինչ հիւրանոց, ես աղբարիկիս քովէն տեղ չեմ երթար, ասաց Անահիտը, գետինը կը պառկիմ, ես հոս եկայ, որ օթե՞լը իջնամ, Գէորգ, դիմելով ամուսնուն՝ աւելացրեց, եթէ կ'ուզես՝ աղջիկներուդ առ եւ օթել գնայ:

Ի հարկէ՞ Գէորգը ոչ մի տեղ էլ չգնաց եւ մենք՝ տասը հոգի, մէկ սենեակում, ինչպէս քոյրեղբայր, հատակին պառկելով գիշերներ լուսացրինք՝ յիշելով մեր երեւանեան անցածգնացած քաղցը, ինչո՞ւ չէ՝ նաեւ ցաւոտ օրերը:

Եկաւ Մարտիրոսին ճանապարհելու օրը: Մեր բարեկամը Անահիտի նման հոգաց մեր բոլոր ծախսերը: Եկած օրն արդէն մեզ էր վերադարձրել նախորդ տարի Երեւանում իրեն պահ տրուած մեր ոսկեղէնները, Արմէնիս ջութակը եւ մի քանի հարիւր դոլարը:

Փխրուն հոգու տէր Մարտիրոսը մեզ էլ լացացրեց բաժանման պահին: Նոյնը հիմա ինձ՝ այս սողերը գրի առնելիս...

Սա ձախ ոտքը մէջ մը անցուր նոր մոտելի կօշիկին մէջ, ասում էր Մարտիրոսը ամէն անգամ Պոլսի իր Փաբլիկայի աշխատասենեակը մտնելիս:

Ափսո՛ս, ինքը չկարողացաւ ներկայ լինել իր պաշտած ՍԱՅԱԹ ՆՈՎԱ երգչախմբի 2001 թուականի իմ հեղինակային համերգին, որը համատեղ որոշմամբ նուիրուեց մեծ հայրենասէր Մարտիրոս Պալրգճեանի անմահ յիշատակին:

Շարժանկարի Աշխարհահռչակ Բեմադրիչ Գիւան Աւետիսեան Այցելեց Փասատինայի Հայկական Գեմարանը



Իր նորագոյն շարժանկարի՝ «Դրախտի Դարպաս»ի ԱՄՆի մէջ անդրանիկ ցուցադրութեան համար Լոս Անճելըս ժամանած շարժանկարի աշխարհահռչակ բեմադրիչ՝ Պեռլինի, Քանի, Շանկայի եւ բազմաթիւ այլ միջազգային փառատօներու դափնեկիր ծիւան Աւետիսեանը 2 Մայիս, Երկուշաբթի օր այցելութիւն մը տուաւ Փասատենա քաղաքի նորաբաց Հայկական ճեմարան ու հանդիպում ունեցաւ անոր աշակերտներուն հետ: Հանդիպումը սկսաւ Հայաստանի քայլերգի եւ Տէրունական աղօթքի միաբերան երգեցողութեամբ:

Արցախի պատմութեան, ներկայիս ու մշակույթին նուիրուած բազմաթիւ շարժանկարներու հեղինակ ծիւան Աւետիսեանը նախ ողջունեց վարժարանի սրահի մէջ համախմբուած աշակերտները, ապա անդրադարձաւ Արցախի ներկայիս, մարտահրաւէրներուն եւ անոր յուսալի ապագային: Յիշեցնենք, թէ բեմադրիչը թէեւ ծնած է Կիւմրիի մէջ, բայց ուսանած եւ ապրած ըլլալով Մտեփանակերտի մէջ, ինքզինք Արցախցի կը համարէ:

Ապա հիւրը արտայայտուեցաւ իր արուեստի եւ անոր քաղաքական, տնտեսական ու յատկապէս դիւանագիտական ոչօրի մասին, բացատրելով թէ եթէ ճիշտ ուղղութեամբ ու բարձրորակ շարժանկարներ արտադրուին Հայաստանի մէջ կամ հայերու կողմէ այլուր՝ անոնք կը դառնան հայը աշխարհին ծանօթացնելու լաւագոյն միջազգային միջոցը, ու կը նպաստեն դիւանագիտական հարցեր արծարծելու ի շահ հայութեան: Ան աւելցուց թէ, միջազգային յաջողակ շարժանկարները նաեւ եկամուտի անուրանալի աղբիւր են բազմաթիւ երկիրներու համար եւ նոյնը կրնայ ըլլալ Հայաստանի պարագային:

Անդրադառնալով 44-օրեայ պատերազմին, ան ըսաւ, թէ պատերազմի 38 օրը ինք Արցախի մէջ էր: Ծակատի մօտ, դաշտերու վրայ, գիւղերու մէջ ինքը կատարեց կեն-


դանի պատկերահանումներ՝ որոնք կատարուածը իր ամբողջ ու մերկ ողբերգութեամբ կը ցուցադրեն: Ապա աշակերտներուն ներքին հարց մը տուաւ, թէ ե՞րբ է որ պետութիւն մը իր զինուորի օգնութեան պէտք կ'ունենայ: Ինքը պատասխանեց այդ հարցումը, բացատրելով թէ երբ պարտուած է քաղաքացիներ, գիտնականներ, արուեստագէտներ, տնտեսագէտներ, դասախօսներ, այսինքն երբ թերացած է երկրի ամբողջ համակարգը, ապա զինուորը պէտք է ձակատի վրայ կուռի այդ բոլորին ձախողութիւնները հատուցելու համար: Աւետիսեանը ըսաւ, թէ հայ զինուորը չպարտուեցաւ, այլ պարտուեցաւ հայ ազգի թոյլ մտածողութիւնը եւ տկար կեցուածքը: Ուստի, ան աշակերտներուն խրատեց՝ նպատակ ունենալ, նպատակ, որ բարձր է, ազնիւ ու ազգօգուտ: Աւետիսեանը աշակերտներուն յորդորեց ըլլալ լաւագոյն բժիշկը, բեմադրիչը, ուսուցիչը, գիտնականը, որպէսզի երկիրը հօգը ըլլայ ու հարցեր լուծելու համար անգամ մը եւս պէտք չունենայ իր զինուոր գաւակը մարտի ուղարկելու: Մեր ազգի քանակական փոքրութիւնը, ըսաւ ան, կը պարտաւորէ որ իւրաքանչիւր հայրիկ ազգային գիտակցութեան եւ պատասխանատուութեան ծանր բաժին մը կրէ իր ուսերուն վրայ:

Խօսակցութեան նիւթերը աւելի ճիւղաւորուեցան ու հարստացան, երբ աշակերտները իր շարժանկարներու, արուեստի եւ այլ նիւթերու վերաբերեալ հարցումներով ողողեցին հիւրը:

Այժմ աշակերտները անհամբեր կը սպասեն «Դրախտի Դարպաս»ի ցուցադրութեան թուականի հրապարակումը, որպէսզի ամբողջ ճեմարանով լեցնեն սրահը ու ներշնչուին Աւետիսեանի արուեստով ու գեղագիտական ճաշակով:

Հանդիպումի վերջաւորութեան աշակերտները հիւր բեմադրիչին նուիրեցին շնորհակալական բացիկ ու ծաղկեփունջ մը, ապա նկարուեցաւ վարժարանի «Հայկական Անկիւն»ի մէջ:

Անթոնիօ Ֆէյժօ կը Ստանձնէ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահի Պաշտօնը



3 Մայիս 2022-ին Փրոֆեսոր Անթոնիօ Ֆէյժօ ստանձնեց Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահի պաշտօնը. ան նախագահ ընտրուեցաւ 15 Դեկտեմբեր 2021-ին տեղի ունեցած Հիմնարկութեան հոգաբարձու մարմինի լիազուտ մար ժողովին:

Անթոնիօ Ֆէյժօ Հիմնարկութեան հոգաբարձու մարմինի ոչ-գործադիր անդամ եղած է 2018 թուականէն ի վեր: Ան առաջին նախագահն է որ մասնագիտացած է հասարակագիտական ուսման մէջ. իր դոկտորականը ստացած է Պրաուն համալսարանէն (Միացեալ Նահանգներ) 1985-ին, մասնագիտանալով Անգլիական եւ հիւսիսամերիկեան գրականութեան մէջ: Նոյն նիւթին շուրջ իր մագիստրոսի կոչումը ստացած է Ալպանիի Նիւ Եորքի պետական համալսարանէն (1979): Ֆէյժօ Լիզպոնի համալսարանի դասախօս է (Անգլիագիտութեան եւ գրականութեան տեսութեան բաժին): Նախապէս եղած է Լիզպոնի համալսարանի Արուեստի եւ Հասարակագիտութեան դպրոցի տնօրէն, շատ մը այլ վարչական

բարձր պաշտօններու առնթեր: Ան անգլիական, ամերիկեան եւ փորթուկալական գրականութեան վերաբերող բազմաթիւ գիրքերու եւ յօդուածներու հեղինակ է. այլ գործերու շարքին՝ փորթուկալերէնի թարգմանած է նաեւ Շէյքսպիրի եւ Օսքար Ուալտի գործերէն:

Պաշտօնի ստանձնումի իր խօսքին մէջ Անթոնիօ Ֆէյժօ ընդգծեց որ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը «բարեգործական հաստատութիւն մըն է, որ կը մարմնաւորէ այն ժառանգութիւնը որ ձգած է Գալուստ Սարգիս Կիւլպէնկեանը՝ իր ժամանակին եւ իր դարուն եզակի մարդը. որեւէ անձ որ կը ղեկավարէ Հիմնարկութիւնը, պարտի պահպանել այդ ժառանգութեան տեւական բնոյթը»:

Նախկին նախագահ՝ Տիկին Իզապէլ Մոթա արժանացաւ յոտնկայ ծափահարութեան Հիմնարկութեան իր 26-ամեայ ծառայութեան համար, զայն նախագահելով վերջին հինգ տարիներուն ընթացքին:

«Դարձեալ Քեզի Համար Ազնաւոր»

Շարունակուած էջ 11-էն

Արդարեւ, նորութիւն էր շատերուն համար, բեմականացած տեսնել թատերա-երաժշտական եւ շարժանկարային գեղեցիկ համադրութիւն մը, որուն մէջ ներդաշնակօրէն ընդելուզուած էին նաեւ պարն ու պալէն: Այս բոլորը գեղեցիկ համադրութեամբ, աներկբայօրէն կ'արտացոլացնէին մեծ երգահանի բազմաբեղուն կեանքի տարբեր երեսակները:

Սոյն միջոցառումին մէջ իր մեծ ներդրումն ունի շնորհալի բեմադրիչ Գոհար Կարապետեանը, որ կրցած է թափանձել երգին հետ առնչուող ընկերա-հոգեբանական երեւոյթներուն եւ այդ բոլորը ինքնատիպ կենդանի պատկերներու ու մնջախաղերու ձեւով, ներկայացնել հանրութեան, առաւել եւս արժեւորելով երգն ու երգահանը: Այսպիսով իւրաքանչիւր երգ իր գեղարուեստական եւ պատկերաւոր արտացոլացումն ստացաւ, թէեւ երբեմն չափազանցուած ձեւով, բայց խիստ հետաքրքրական ըլլալով, գնահատելի ընկալում մը ունեցաւ ներկաներուն կողմէ (Bon Anniversaire, La Mamma):

Յայտագրի առաջին բաժնի

Կիզակէտը հանդիսացաւ Շարլ Ազնաւորի նշանաւոր «Pour Toi Arménie» հայրենասիրական երգը, զոր կատարեց «Նայիրեան» երգչախումբը, որու աւարտին մեծ քառակուսիներով պարզուեցաւ հայոց եռագոյն դրօշն ու Ազնաւորի դիմանկարը, արժանանալով բուռն եւ երկարատեւ ծափահարութեան:

Յայտագրի երկրորդ մասով ելոյթ ունեցաւ Paris Chansons երգչախումբը, մեկնաբանելով Շարլ Ազնաւորի երգերէն կազմուած գեղեցիկ փունջ մը, ընկերակցութեամբ քանի մը նուագողներուն:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները, մասնաւորաբար՝ բեմադրիչ Գոհար Կարապետեանն ու խմբավարուհի Արմինէ Ղազարեանը, ինչպէս նաեւ Անի Անմահունին, Ռուբէն Հարմանտայեանը, Ժագ Բերեանը եւ միւս բոլոր մասնակիցներն ու նախաձեռնողները, որոնք իրենց օգտաշատ ներդրումն ունեցան, ազնաւորութեան միջնորդով յազմեցուած ինքնատիպ ձեռնարկ մը հրամցնելով երաժշտասէր հասարակութեան:

Ներկաները սրահէն բաժնուեցան մեծ բաւարարութեամբ:

Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

ԳՈՐԾԱԻՈՐ ԿՈՒԶՈՒԻ
Փասատինայի մէջ Անուշավաճառի հաստատութիւն մը կարիքը ունի աշխատող օրիորդներու եւ տիկիներու Անգլերէն իմանալը պայման է
Մանրամասնութեան համար հեռաձայնել Տիկ. Անահիտին (818) 266-5838 թիւին:

Վերածնունդ՝ Ապրիլի 24-ին

Շարունակուած էջ 11-էն

կողմից անգլերէնով կարդացուած, ծրարին մաս կազմող ասքով:

Առաջին բաժին - «Մշտնջենական Հայաստան»

1.- «Երկինքն ամպել ա», «Ալ ալլուդս» երգերի Ս. Ասլամագեանի մշակումները կատարեց լարային համույթը:

Ասք. - Կոմիտասի խղճամիտ, թանկարժէք գործի մէջ մենք լսում ենք ոգին եւ էութիւնը մի հնագոյն ժողովրդի: Մշտնջենական ժողովուրդ՝ ժառանգած մշտնջենական երկիր:

Այնտեղ, հայ երաժշտութեան հայր՝ Կոմիտասի հրիտակի մէջ է գտնուում հայկական ոգու վաղագոյն որոշ արտայայտչաձեւերին հասնելու դարպասի բանալին:

Միտոյ երկու երգերով մտնում ենք հայաշխարհ: Հայկական աշխարհի բարձրաճանաչակի ծոցում

աղջկան, որ չառնի ուրիշին եւ կրկին վերադառնայ իր մօտ: Այս երկու երգերում, որ պատկերում են մի գեղջկական պատկեր, մենք լսում ենք Կոմիտասի խմբերգային մշակումները: Կոմիտասը որսում է երգասացութեան ամենահարազատ արտայայտութիւնները հէնց շինականներից, որ ապրում էին իրենց հարազատ հողում եւ ժամանակում:

Երկրորդ բաժին - «Ապրիլը՝ դաժանագոյն ամիս...»

5.- «Անտունի» երգը կատարեց երիտասարդ երգչուհի Դալար Արսլանեանը (դաշնամուրի նուագակցութեամբ Վիկտորիա Սիմոնեանի):

Ասք. - Հայը իր հողի պահպանն է եղել հնագոյն ժամանակներից, այդ երկիրը Աստուծոյ կողմից պարգեւուած է եղել հային - այս է պատմութիւնը, որ պատմել ենք հազարամեակներից ի վեր: Սակայն մի հարիւր տարի առաջ,



ապրող սիրահարները պատմում են իրենց պատմութիւնները, եւ դրանց մէջ մենք կարող ենք լսել կապը հողի, բնութեան եւ միջավայրի հետ, որտեղից սերունդ ենք:

2.- «Լուռուայ հորովել»ը հզօր արտայայտչականութեամբ մեներգեց Կարինէ Աւագեանը:

Ասք. - Հայաստանի հիւսիսարեւելքում է գտնուում Լոռի գաւառը: Կոմիտասի երաժշտագիտական նշանակալից գործերից մէկում, ուր նա վերլուծել է գիւղացիների շրթներից քաղուած Լոռու գութաները, հեղինակը ներկայացնում է նրանց աշխատանքի ընթացքում կատարած բազմատեսակ խօսքերն ու ձայնարկումները, մինչ նրանք հերկում են հողը հարազատ եզներին հետ:

3.- «Երեւանի պար» եւ «Հաբրբան» եղանակները՝ մշակուած եւ ղեկավարուած Արտաշէս Քարթալեանի կողմից, ներկայացրեց փողային գործիքների անսամբլը:

Ասք. - Փողային նուագախմբի համար եղած այս մշակման մէջ 12 նուագողները ցոլացնում են հայկական հաւաքովի գուարճալի եւ տօնական ոգին: Առաջինը՝ պարի երգ է, որ քաշում է լսողին հաւաքուածների տօնակատարութեան շրջանի մէջ, եւ երկրորդը՝ սիրոյ երգ է, երկու երիտասարդ, բոցավառուած սիրահարների միջեւ:

4.- «Անձրեւն եկաւ» եւ «Շար ջան, արի» գեղջկական պատկերների երգերով հանդէս եկաւ Լարքի երգչախումբը (ղեկ. Կ. Աւագեան):

Ասք. - Զուարթ, խաղասէր ձի է հեծել տղան՝ մոլեգնած երիտասարդական ցնծութեամբ, որովհետեւ այցի է գալիս իրեն սպասող սիրած աղջկան: Յաջորդ երգում, տղան պաղատում է երիտասարդ

Մեծ Աղէտը քչեց մեզ այդ հողից դէպի աշխարհի ծայրերը, դէպի Սփիւռք, եւ բացուեց մի խաւար նոր էջ մեր պատմութեան մէջ: Մեր անտունի լինելու սկիզբն էր այդ, որ նշում ենք այսօր, ինչպէս ներկայացրել է Կոմիտասը այս մեներգում՝ «Անտունի»:

6.- Դաշնամուրային ստեղծագործութիւններ, Սվետլանա Նավասարդեան, դաշնամուր «Երանգի» (մենապար) «Գարուն ա» (մշ. Ռ.Անդրեասեանի)

Ասք. - Վշտահար սիրտ. սառած, ամուլ հող: Կոմիտասը ներկայացնում է մեզ աւերակուած եւ աւարառուած տան դիմաց տառապող հոգու վշտալից կերպարը - սկզբում՝ մեծաշուք մենապարի եղանակով, ապա երկրորդում՝ սառցակալած սրտի երգած՝ Գարուն ա, ձիւն ա արել երգի դաշնամուրային վերձանութեամբ:

Այս երեկոյում, մեծ առանձնաշնորհ էր մեզ համար այդ դաշնամուրային մշակումների մեկնաբանութիւնները՝ Հայաստանի ժողովրդական արտիստուհի, ԽՍՀՄ Պատուոյ շքանշանակիր եւ Ս. Մեսրոպ շքանշանակիր, բազմաթիւ տիտղոսների դափնեկիր Սվետլանա Նավասարդեանի կողմից, ով ունկնդրին տեղափոխեց մի այլ, իմացական բարձունք:

Երրորդ բաժին - «Վերածնունւած Հայաստան»

7.- «Գարուն ա» եւ «Շողեր ջան» երգերի Ս. Ասլամագեանի մշակումները կատարեցին «Վեմ» լարային քառեակի պատուակալ անդամները (ղեկ. Մովսէս Պողոսեան):

Ասք. - Դարձեալ ծագում է հարց. ի՞նչ պիտի լինի յետոյ: Մեր ապագայում ընկած է մեր նկարա-

գիրը: Ինչպէ՞ս կառուցել գալիքը՝ հակառակ անցածին: Մենք դրան պատասխանում ենք հիմա՝ ապրելով մեր դրացիների հետ, ուր էլ որ լինեն նրանք, ինչ լեզուով էլ որ խօսեն, շփուում ենք նրանց հետ եւ հաղորդակցում՝ նրանց լեզուով եւ նրանց մշակութային ձեւակերպումներով: Կոմիտասի երկու երգերի լարային քառեակի մշակումներում, որ արեւմտեան արտայայտչաձեւերի բիւրեղացած մարմնաւորումներ են, չորս մենակատարները գալիս են համաձայնութեան՝ հաւաքուելու, քննարկելու եւ հասկանալու իրար:

8.- «Կուռնկ»/«Դէլ եաման»-ի երաժշտութեամբ եւ «Ծիսական պար»-ով բեմ բարձրացաւ Լարքի նորափթիթ պարմանուհիների պարախումբը (Պարուսոյց՝ Լուիզա Խաչատրեան):

Ասք. - Մատղաշ սերունդը պարում է: Պարի մէջ գտնում ենք

մունք՝ Ուրիլամ Թաշեան, Լիոնա Թորոսեան:

Ասք. - Մանուկների ձայներում կարելի է լսել մեր յարակալութեան յոյսը, գօրութիւնը, որ թողել ենք ետեւում: Նրանց շուրթերից առաջինը լսում ենք մի գեղուն նուիրուած հայ լեզուին. երկրորդում՝ լսում ենք կարօտ դէպի մայրը՝ որ զոհաբերող եւ խարսխող անձնաւորութիւնն է իւրաքանչիւր հայի կեանքում:

Եզրափակում էր համերգը. 11.- «Հով արէք, սարեր ջան» (Լարքի երգչախումբ՝ ղեկ. Կ. Աւագեան, մշակումները՝ Ա. Քարթալեանի):

Ասք. - Նայում ենք առաջ, ձգտելով մէկ ականջում միշտ լսել անցեալի ձայնը: Այժմ, մենք լսում ենք նոյն ինքը Կոմիտասին, նրա ձայնը, որ հարիւրտաս տարի առաջ արձանագրուել է Փարիզում: Նա երգում է մի գեղջուկ երգ, որ



արտայայտչաձեւերի մեր վաղագոյն աւանդութիւնները, կեանքը հասկանալու կերպը: Ահա, առաջին պարի մէջ պարում են սիրով լցուած աղջիկները, քանի որ ապրելու համար պէտք է սիրել: Առաջին պարին յաջորդում է կանանց ծիսական պարը, նուրբ, հանդիսաւոր, ընդ որում՝ պարողները հաշտ են դառնում տիեզերքի հետ:

9.- «Շուշի պար» եւ «Ամպել ա» մեղեդիները հրամցուեցին Քարթալեան ջազային քառեակի կողմից՝ դուդուկ, շուրի, բկու, բաս կիթառ, թմբուկ, դաշնամուր, Ա. Քարթալեանի մշակումներով:

Ասք. - Մենք խօսում ենք ժամանակակից լեզուներով, ժամանակակից ձեւերով, բայց եւ այնպէս միշտ պատմում ենք վաղեմի պատմութիւն: Ջազային քառեակի այս մշակումները ներկայացնում են ժամանակակից արուեստագէտների կապը իրենց մշտնջենական արմատների հետ: Մենք սովորում եւ յարմարում ենք եւ միշտ յիշում ենք:

10.- «Ով մեծաքանչ» եւ «Երազ» երգերը մեկնաբանեց «Ծիսածան» մանկական երգչախումբը (ղեկ. Կ. Աւագեան), հայերէն աս-

գարմանալիորէն համամարդկային երաժշտական ձեւի կառուցուածք ունի (կանչ եւ պատասխան սկզբունքով): Կոմիտասը կանչում է, եւ երգչախումբի ձայներով, մենք պատասխանում ենք:

«Հով արէք» երգի հիմնական թեման հնչում էր Կոմիտասի ձայնով: Առաջին էպիգրոդը (անցողիկ մասը) ներկայացնում է արական խումբը երաժշտական ժամանակակից մշակումով, ապա վերադառնում է Կոմիտասի ձայնը: Երկրորդ էպիգրոդը երգում է կանանց խումբը՝ հայկական ազգային իւրատեսակ տարազներով, գուսպ, սակայն հայեցի մի փառաւորութեան մէջ, ու աւարտում է համերգը՝ կրկին Կոմիտասի ձայնով:

Այս էր երեկոն, որ Լարք երաժշտական ընկերակցութիւնը պատրաստել էր բեմական, սակայն ոչ աշխատանքային եւ ստեղծագործական, դադարից չետոյ:

Վերածնունւած ժողովրդի գաւակները արժանին մատուցել էին իրենց նախնիներին՝ միշտ նպատակակէտ ունենալով հայ մշակութի, հայի ինքնութեան պահպանումը, տարածումը եւ փոխանցումը յաջորդ սերունդներին:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

«Մանջրսեր Սիթին» Յաղթեց Եւ 3 կետ Առաջ Է «Լիվերփուլէն»

Անգլիոյ առաջնութեան 36-րդ հանգրուանին ախոյեան «Մանջրսեր Սիթին» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Նիւքասլ Եոնայթըտի» հետ: Կատարուած խոսակցութեան Գոլաբոլորի վրայ իրենց արձանագրեց 5:0 արդիւնքով:

Նոյն հանգրուանին «Լիվերփուլ» ընդունեց լոնտոնեան «Թոթենհեմին» եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 1:1:

«Մանջրսեր Սիթին» 86 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ արդէն 3 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լիվերփուլէն»: Երկու խումբերուն ալ մնացած է կատարել երեքական հանդիպում:

«Միլան» Վերադարձաւ Առաջին Տեղ

Իտալիոյ առաջնութեան 36-րդ հանգրուանին «Միլան» հիւրընկալեց «Վերոնային» եւ յաղթանակ արձանագրեց 3:1 արդիւնքով:

Հիւրերի կազմին մէջ երկու կողմի հեղինակ դարձաւ իտալացի կիսապաշտպան Սանտրո Տոնալին: Աչքի ինկաւ նաեւ իտալացի պաշտպան Ալեսանտրո Ֆլորենցին:

«Միլան» 80 կէտով վերադարձաւ առաջին տեղ: Երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Ինթեր» ետ է 2 կէտ:

«Պրիւզէ» Յաղթեց Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ, Ադամեանը Հիմնական Կազմին Մէջ Էր

Պելճիգայի առաջնութեան երրորդ հանգրուանին «Պրիւզէն» հիւրընկալեց առաջատար «Ռոյալ Եոնիոնին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

74-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ հիւրերու պելճիգայի կիսապաշտպան Հանս Վանակենը:

Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը «Պրիւզէի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 70-րդ վայրկեանին:

Աւելացուած 8-րդ վայրկեանին «Պրիւզէի» առաւելութիւնը կրկնապատկեց նորուեկիացի յարձակող Անթոնիո Նուսան:

«Պրիւզէն» 43 կէտով բարձրացաւ առաջին տեղ: Նոյնքան կէտ ունի երկրորդ տեղ նահանջած «Ռոյալ Եոնիոնը»:

«Ռոման» Մխիթարեանին Առաջարկած Է 2 Տարուայ Պայմանագիր

Իտալական «Ռոման» Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին առաջարկած է եւս երկու տարիով երկարաձգել համագործակցութիւնը, սակայն աշխատավարձի որոշակի կրճատմամբ, կը հաղորդէ իտալական Corriere dello Sport-ը:



33-ամեայ ֆուտպոլիստի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ այս մրցաշրջանի աւարտը:

Ընթացիկ մրցաշրջանին Մխիթարեան փորձով կապակցի ժողով Մոնթրիալի գլխաւորած խումբին հետ մասնակցած է 43 հանդիպման, նշանակած՝ 5 կոլ, կատարած է 9 կոլային փոխանցում:

Միապէն «Ռեալի» Հետ Համաձայնութեան Զէ Հասած Մէկ Պատճառով

Ֆրանսական ՊՍԺ-ի եւ աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակող Կիլիան Միապէն Մատրիտի «Ռեալին» հետ համաձայնութեան չէ հասած իր դիմագիծի իրաւունքի 50 տոկոսի պատճառով, կը հաղորդէ El Pais-ը:



Արքայական ակումբին մէջ ընդունուած կարգի համաձայն՝ խաղցողներու դիմագիծի իրաւունքին ստացուող եկամուտի 50 տոկոսը բաժին կը հասնի ակումբին: Միապէն սկզբունքորէն դէմ է իր այդ իրաւունքին հասած եկամուտին մասնաբաժին տալուն: Այդ պատճառով վերջերս Միապէն պոչքոտ ըրած էր հովանաւորներու առջեւ ունեցած պարտաւորութիւնները Ֆրանսայի հավաքականին մէջ:

ՊՍԺ-ն համաձայնած է Միապէնի պահանջին եւ ֆուտպոլիստին թողած է դիմագիծի իրաւունքի 100 տոկոսը:

«Ռեալ» Միապէնի առաջարկած է 180 միլիոն եւրո պոնուս Մատրիտ տեղափոխուելու համար եւ տարեկան 40 միլիոն եւրո աշխատավարձ:

ՊՍԺ-ն 23-ամեայ խաղցողին կը վճարէ 100 միլիոն եւրո պոնուս եւ

Գարիկ Կարապետեանը՝ Երիտասարդներու Աշխարհի Ախոյեան



Հայաստանի խումբը երկրորդ ոսկի մետալը նուաճեց ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնութեան:

Յունաստանի Հերակլիոն քաղաքի մէջ ընթացող առաջնութեան 96 Քոլոկրամ ծանրութեան պայքարին Գարիկ Կարապետեան երկրամարտի 370 քիլո արդիւնքով հռչակուեցաւ երիտասարդներու աշխարհի ախոյեան՝ երկրորդ տարին անընդմէջ:

Պոկոմ վարժութիւնը Կարապետեան պայքարը սկսաւ ամենածանր ծանրութեամբ եւ նուաճեց այս վարժութեան փոքր ոսկի մետալը:

Երիտասարդներու աշխարհի առաջնութեան Մելիք Ղուկասեանի գլխաւորած խումբէն ոսկէ մետալակիր դարձած էր նաեւ Գառնիկ Զարոյեանը:

«Նորավանքը»՝ Հայաստանի Գաւաթակիր



Վայքի «Նորավանքն» առաջին անգամ ըլլալով նուաճեց ֆուտպոլի Հայաստանի գաւաթը: Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին մէջ տեղի ունեցած եզրափակիչի խաղին «Նորավանքը» մրցեցաւ «Ուրարտուի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

28-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ ռուս պաշտպան Տեմուր Մուստաֆինը, 77-րդ վայրկեանին առաւելութիւնը կրկնապատկեց նիճերիացի յարձակող Ենէ Տեմստոնը:

2020-ին հիմնադրուած «Նորավանքը» այս մրցաշարքի ընթացքին պայքարէն դուրս թողած էր Գիւմրիի «Շիրակին», Երեւանի «Արարատ-Արմենիային» եւ «Արարատին»:

Ամերիկեան Ընկերութիւններու Խումբը «Չելսիի» Համար Կը Վճարէ 5,2 Միլիարդ Տոլար

Ամերիկեան ընկերութիւններու խումբը կը գնէ Լոնտոնի «Չելսի» ֆուտպոլային ակումբը՝ վճարելով 5,2 միլիարդ տոլար, կը հաղորդէ ակումբի կայքը:

Խումբի մասնակիցներն են ամերիկացի միլիարդատէր, պէյսպոլի «Լոս Անճելոս Տոճըրս» ակումբի համասեփականատէր Թատ Պիոլին, ամերիկացի գործարար Մարք Ուոլթըրը, գոլիցրիացի միլիարդատէր Հանսյորգ Վիսը եւ ամերիկեան Clearlake Capital ներդրումային ընկերութիւնը:

Գործարքին պէտք է հաւանութիւն տան Անգլիոյ ֆուտպոլային իշխանութիւնները եւ Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը:

«Չելսիի» բաժնետոմսերուն համար կը վճարուի 2,5 միլիարդ ստերլինգ, որ կը փոխանցուի ակումբի սեփականատէր, ռուս գործարար Ռոման Ապրամովիչի սառեցուած պանքային հաշուին Մեծ Բրիտանիայի մէջ: Այդ գումարը կը յատկացուի բարեգործութեան:

1,75 միլիարդ ստերլինգ կ'ուղղուի ակումբի զարգացման, «Չելսիի» ակադեմիայի եւ երկու մարզադաշտերու ընդլայնման:

Երկու տարուայ համար 100 միլիոն եւրո վարձատրութիւն: Կը սպասի, որ առաջիկայում Միապէն երկու տարուայ պայմանագիր կը կնքէ ՊՍԺ-ի հետ: Գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ Յուլիսի 1-ը: